Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԴԵՊԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԸ

Գլուխգրեցին
Ս. ՌՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀԱՍԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՅԵՎ 1931 Թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭКОНОМИЧЕСКИХ
Академии Наук
СССР

ԱԶԴԱՅԻՆ ՓՈՓՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ
ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

631.5
Բ-87

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյև.—Սոցիալիստական շինարարության նոր ետապը . . . . . 6 կ.
2. Կուրբեյկո.—Կուլակը կոլխոզի թշնամի . . . . . 5 »
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն . . . . . 2 »
4. Սեալին.—Գատասխան ընկեր կոլխոզնիկներին . . . . . 5 »
5. Մ. Դիգոյան.—Կոլխոզների մասին . . . . . 6 »
6. Վ. Իվանով.—Նոր ետապում . . . . . 5 »
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն . . . . . 2 »
8. Կնոջ աշխատանքը կոլխոզում . . . . . 8 »
9. Ա. Անդրեյև.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցվերակառուցման խնդիրները . . . . . 2 »
10. Կալնին.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը կոլխոզներում 8 »
11. Ա. Անդր.—Սոցիալիստական շինարարության գոտում . . . . . 8 »
12. Հյուս. Կով. Ցեկը. ծխախոտագործական միության դիմումը . . . . . 2 »
13. Հկ(բ)կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի զեկուցումը) . . . . . 15 »
14. Ա. Հովհաննիսյան. յերգ մարտական փորձի (բանաստեղծություններ) . . . 20 »
15. Հյուս. Կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի բանաձևերը . . . . . 8 »
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլխոզներում . . . . . 15 »
17. Ցեղիպատացորենի կուլտուրան Հ. Կ. . . . . 6 »
18. Միկուլա.— Դեպի նոր կենցաղը կոլխոզներում . . . . . 5 »
19. Սկոմորոխով.—Պաշտպանեցեք անասուններին վարակումից . . . . . 5 »
20. Դոլգովսկի.— Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին . . 6 »
21. Հնգամյակի յերրորդ տարվա շեմքին . . . . . 16 »
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. տ. սոց. վերակառուցումը . . 10 »
23. Ցա. Տելնով—Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսությունը և նրա վարչությունը 1-ին պրակ . . . . . 8 »
24. Նույնը, 2-րդ պրակ . . . . . 4 »
25. Ս. Դ. Բոստանջյան—Անասնաբուծական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը . . . . . 20 »
26. Ա. Մենարդ.—Խորհրդների վերընտրությունների հիմնական խնդիրները . 7 »
27. Խորհրդների վերընտրությունների գործնական խնդիրները . . . . . 8 »
28. Ամրապնդիր խորհրդները (պիյեսա) . . . . . 10 »
29. Ռուսինով.—Կուլակության վերացումը և խորհրդների խնդիրները . . . . 7 »
30. Բոստանջյան.—Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները . . . . . 10 »

631.5
Բ-87

04 AUG 2010

С 31-К
1086
661

Գրոլիեարներ բոլոր յերկ ցերի, միացեք

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ Ս. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭКОНОМИКИ
Академии Наук
СССР

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՅԵՎ 1931 Թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍԻՍ. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՑԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՌՈՍՏՈՎ - ԴՈՆ 1931

16727

06.03.2013

С. БОСТАНДЖЬЯН

Завершение сплошной коллективизации и задачи весенней посевной кампании 1931 г.

На армянском языке.

СЕВКАВКРАЙНАЦИЗДАТ

ՀՍՍՌ-Ամ ԳԱ Գրադարան
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Ամ ԳԱ
АН Армянской ССР
им. А. Мас
ՀՍՍՌ

60875-67

Крайлит № А 601 Раз-кн. тип. СККПО. От.-форм. А5—210×148 м/м. Зак. № 355—1500

ՀԱՄԱՏԱՐԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍՈՒՄ

«Այն յելքը, որ իրոք հաստատուն է և գյուղացիների մասսային մոտեցնում է կուլտուրական կյանքին, որ նրանց իսկապես դնում է մուս քաղաքացիների հետ հավասար դրության մեջ,—այդ յելքը հանդիսանում է միայն հողի հասարակական ոգտագործումը և հողի այդ հասարակական մշակմանը ատիճանական միջոցներով ձգտում է այժմ խորհրդային իշխանությունը»։ Լ Ե Ն Ի Ն 1918 թիվ

«Հիրավի, պետության իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի միությունը ժանր ու մանրագույն գյուղացիների շատ միլիոնների հետ, գյուղացիության վերաբերմամբ այդ պրոլետարիատի ղեկավարության ապահովումը և այլն—մի՞թե սա այն ամեն անհրաժեշտը չէ կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»։

Լ Ե Ն Ի Ն, հատ. 18, մաս 2, եջ 140

«...Գյուղատնտեսության և նրա հիմնական խնդիրների բախտն այսուհետև վորոշելու յեն վոչ թե անհատական գյուղացիական տնտեսությունները, ա՛լ կոլխոզները և սովխոզները» (ՍՏԱԼԻՆ, 16 դ համագումարում արտասանած ճառից)։

ՃՇՈՒՄ Ե՞Ն ԿՈԼԽՈԶՆԵՐԸ

Սովխոզների և կոլխոզների բոլշևիկյան առաջին տարվա գործունեության հիմնական և կարևորագույն արդյունքներն անվիճե-

լիորեն ապացուցում են, վոր գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում խոշորագույն նվաճումներ կան։

Մեր ասածը հաստատելու համար բերենք փաստեր։

1929 թվի հոկտեմբերի 1-ին Հ.-Կովկասում կոլեկտիվացման եր յենթարկված գյուղացիական տնտեսությունների 18 տոկոսը։ Իսկ 1931 թվի հունվարի 1-ին արդեն կոլեկտիվացման տոկոսը հասավ 65,3 և ընդգրկում եր 730 հազար տնտեսություն, կամ 3 միլիոն 664 հազար 419 շունչ։

Անցած 1930 թվին Հ.-Կովկասի կոլխոզները ցանել եյին 6 միլիոն, 874 հազար հեկտար, կամ ամեն մի աշխատունակ անդամին բնկնում եր 3 ամբողջ 8 տասերորդական հեկտար։ Իսկ անհատականները ընդամենը ցանել եյին 4 միլիոն, 446 հազ. հեկտար, կամ ամեն մի աշխատունակ անձին 2 ամբողջ 8 տասերորդական հեկտար։ Ուրիշ խոսքով, ամեն մի անհատական աշխատունակ անձ 1 հեկտարով կամ 27 տոկոսով պակաս եր ցանել, քան ամեն մի կոլխոզնիկ։

1929—30 տնտեսական տարում կոլխոզներում և անհատական տնտեսություններում գյուղատնտեսական մեքենաները և լծկանները հետևյալ կերպ եյին ծանրաբեռնված. կոլխոզներում ամեն մի շարքացանը ծանրաբեռնված եր 58 հեկտարով, իսկ անհատական տնտեսություններում՝ 54 հեկտարով։ Ամեն մի հնձող յեվ կալող մեքենա կոլխոզներում ծանրաբեռնված եր 38 հեկտարով. իսկ անհատական տնտեսություններում—20 հեկտարով։ Մի լծկան ուժը կոլխոզներում ծանրաբեռնված եր 7 հեկտարով, իսկ անհատական տնտեսություններում—5 հեկտարով։ Հացահատիկային կուլտուրաների 1 հեկտարից կոլխոզները ստացան միջին թվով 8 ցենտներ բերք, իսկ անհատականները—7,7 ցենտներ։

Այս թվերն ասում են, վոր կոլխոզներն ամեն մի շնչին ավելի յեն ցանել, քան անհատականները և բերքն ել ավելի յեն ստացել, քան անհատականները։ Դա շատ հասկանալի յե, վորովհետև կոլխոզները սկսեցին շուտ ցանել, լավ սերմացու ցանել և մշակում եյին ավելի լավ մեքենաներով, քան անհատականները։

Բացի դրանից, այս թվերն ասում են այն, վոր ամեն մի

մեքենա, ձի կամ յեզ կարողացել է կոլխոզում ավելի շատ մշակել, քան անհատական տնտեսության մեջ, չնայած, վոր իրենց գոյության առաջին տարում կոլխոզները դեռ չեյին կարողացել ինչպես հարկն է կազմակերպել իրենց աշխատանքները։ Դա հետևանք է նրան, վոր կոլխոզները մշակում են ընդհանուր հողամասեր, մշակում են խոշոր մասսիվներով, հետևապես և քիչ ժամանակ են կորցնում դաշտ գնալու և վերադառնալու վրա։

Հետևանքն այն յեղավ, վոր կոլխոզները, վորպես ընդհանուր կանոն, ամբողջովին կատարեցին յեվ նույնիսկ գերակատարեցին հացամբերումների պլանը, ապահովեցին իրենց սերմացույի ֆոնդով, պարենով, իսկ անասուններին՝ կերով։

Այդպես չե դրությունն անհատականների մոտ։ Զքավոր և սակավազոր միջակ անհատականները, ել չխոսենք բատրակների մասին, վորպես ընդհանուր կանոն, պարենով, անասունների կերով և սերմացույով ամբողջովին ապահովված չեն։

ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՀՍԿԱ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ

Յեթե մենք վերցնենք Հ.-Կովկասի սովխոզները, ապա կըտեսնենք, վոր կուսակցությունը և խորհրդային իշխանությունը այստեղ ավելի խոշոր հաջողություններ են ձեռք բերել։

Բերենք հետևյալ աղուսյակը.—

	1928 թ.	1929 թ.	1930 թ.
Սովխոզների թիվը . .	194	150	231
Բոլոր սովխոզների հողային տարածութ. . .	740.000 հկ	1.799,000 հկ	3.713.000 հկ
Մեքենայական քաշող ուժը	5.525 »	15.585 »	44.655 »
Ցանքերի տարածութ. .	97.000 »	216.000 »	410.000 »
Հացահատ. ընդ. քանակը	260.000 ցտ	957.000 »	2.815.000 »
Ապրանքային հացահատ.	177.000 »	735.000 ց.	2.139.000 ց.
Ձիյերի քանակը . . .	7.200 գլ.	8,900 գլ.	9.868 գլ.

	1930 թ.	1929 թ.	1928 թ.
Խոշոր յեղջյուր. անաս. քանակը	14.800 »	16.400 »	169.320 »
Այդ հաշվում կովերի քանակը	3.500 »	4.000 »	60.360 »
Հասակավոր վոչխարների քանակը	331.000 »	447.000 »	676.900 »
Հասակավոր խոզերի քանակը	4.600 »	5.500 »	33.460 »
Հասակավոր թռչունների քանակ	1.000 »	1.500 »	30.342 »

Պատմության մեջ չտեսնված սովխոզային շինարարության այս թափը ամրապնդելով գյուղատնտեսության սոցիալիստական մասի նյութական և քաղաքական հզորությունը, գործում է վորպես առաջնակարգ ֆակտոր Հ.-Կովկասի համատարած կոլեկտիվացման արագացման տեսակետից։

Սովխոզները կազմակերպելով իրենց աշխատանքը գերազանց մեքենայացման հիման վրա, ոգտագործելով տեխնիկայի և գյուղատնտեսության նորագույն նվաճումները, կիսով չափ կրճատեցին մի հեկտար ցանքի վրա ծախսվող աշխատանքը գյուղացիական տնտեսությունների նկատմամբ յեվ միջնորդ ժամանակ 30—50 տոկոսով բարձրացրին բերքատվությունը հանդեպ գյուղացիական տնտեսության։

Մի քանի խոսք մեքենա-տրակտորային կայանների մասին։

1929 թվի աշնանը Հ.-Կովկասում կար միմիայն մի ՄՏԿ։ 1930 թվի գարնանն այդ թիվը հասավ 51-ի, վորոնք ունեին 2451 տրակտորներ 30249 ձիու ուժով։

1929 թվի ՄՏԿ և կոլխոզների տրակտորներով ընդամենը մշակված եր 650 հազար հեկտար ցանք, իսկ 1930 թվին—1 միլիոն 640 հազար հեկտար, կամ Հ.-Կովկասի ցանքսային ամբողջ տարածության 14 տոկոսը։

Համատարած կոլեկտիվացման պայմաններում տրակտորը վոչ միայն տեխնիկական դեր է կատարում, այլինքն վարում

և ցանում, այլ և բուքսիրի դեր է կատարում—քաշելով միջակային հիմնական մասսաներին դեպի կոլխոզ։

Այսպիսի ապշեցուցիչ այսինքն, համաշխարհային պատմական նվաճումներ կուսակցությունը ձեռք բերեց միայն դեպի գյուղացիությունն ունեցած իր լենինյան հաստատուն հաղորդակցությամբ։ *Կուսակցությունը ձեռք բերեց այդ նվաճումները, վորովհետև անխնայորեն պայքարում եր և պայքարում է աջ թեքման դեմ, վորը հանդիսանում է դասակարգային թշնամու ագենտուրան կուսակցության շարքերում և հակահեղափոխական տրոցկիզմի աջ ու «ձախ» շեղումների դեմ։*

Կուսակցությունը ձեռք բերեց այդ նվաճումները, վորովհետև գյուղացիության չքավորա-միջակային հիմնական մասսաները կոլխոզների, սովխոզների ամենորյա մասսայական փորձից համոզվեցին, վոր կուսակցության գիծը ճիշտ է, վոր կոլեկտիվ տնտեսությունը ձեռնտու յե, վոր անհնար է այլևս բարձրացնել սեփական տնտեսությունը և նյութական դրությունը անհատական տնտեսության հիման վրա, վորից հետո նրանք (մասսաները) մեծ ալիքով մտան կոլխոզ։

Կուսակցությունը ձեռք բերեց այդ նվաճումները, վորովհետև անշեղ և հաստատուն կերպով անց է կացրել և կանցկացնի կուլակությանը վորպես դասակարգի վերացնելու քաղաքականությունը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Բատրակ, չքավոր յեվ միջակ անհատական, չկա այլևս հեռանկար յեվ հնարավորություն fn տնտեսությունը անհատապես զարգացնելու համար։

ԲԱՏՐԱԿ, ՉՔԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԱՆՀԱՏԱԿԱՆ, ՄՏԱԾԻՐ ԱՅՍ ԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ՎՈՐՈՇԻՐ ՔՈ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔՈ ՍԵՓԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.—ԳԱՐՈՒՆԸ ՍԱՐԵՐԻ ՅԵՏԵՎՈՒՄ ՉԵ։

ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԴՐՎԱԾ ՄԵՐ ԱՌԱՋ 1931 ԹՎԱԿԱՆԻ ՅԱՆՎԱՐԻ ԿԱՊԱՆԻԱՅԻ ԱՌԹԻՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կուսակցության 16-րդ համագումարի, Կենտկոմի ու ՀԿ (բ) Կ Յերկրկոմի, ինչպես նաև կառավարական վորոշումների համաձայն, մինչև 1931 թվականի գարնանացանի սկիզբը Հ.-Կովկասյան յերկրամասը հիմնականում պետք է ավարտե համատարած կոլեկտիվացումը։

Այս նշանակում է, վոր կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոլխոզ-կոոպերատիվային և այլ հասարակական կազմակերպությունները իրենց աշխատանքը պիտի կառուցեն այնպես, վորպեսզի լիակատար կամավորության հիմունքով մինչև այս տարվա գարունը ապահովեն յերկրամասի կոլեկտիվացումը—միջին թվով վոչ պակաս, քան բոլոր բատրակ-չքավորական ու միջակ տնտեսությունների 83—85 տոկոսի չափով, իսկ յերկրամասի հիմնական հացահատիկային ռայոններում—բոլոր բատրակ-չքավորական ու միջակ տնտեսությունների լիակատար ընդգրկումը կոլխոզներում։

Ինչպես տեսնում ենք, այս խնդիրը այնքան էլ հեշտ չէ և ունի համաշխարհային պատմական կարևորություն։

Յեվ այս խնդրի իրագործումը բավական դժվար գործ է, մի գործ, վորը պահանջում է ամբողջ խորհրդային ապարատի, բոլոր հասարակական և այլ կազմակերպությունների ուժերի արտակարգ լարում։ Սակայն նա միանգամայն իրագործելի է,

քանի վոր գյուղացիության բատրակ-չքավոր-միջակ հիմնական մասսան համոզվել է մասսայական-գործնական փորձի միջոցով, վոր կոլեկտիվ տնտեսությունը անհամեմատ ավելի ձեռնտու է և այդ մասսան արդեն հաստատուն կերպով ու ընդմիշտ մտել է կոլխոզ։

Այս է ցույց տալիս կոլխոզշարժման պրակտիկան և փորձը։ Բավական է ասել, վոր արդեն այժմ [1]) կոլխոզներում ընդգրկված է բոլոր տնտեսությունների ավելի քան յերկու-յերրորդ մասը և վերջին տարվա ընթացքում յերկրամասում կոլխոզնիկների ինքնալիկվիդացիայի և վոչ մի դեպք չի յեղել։

Կոլխոզներից մասսայորեն դուրս գալու այն դեպքերը, վորոնք տեղի ունեցան 1930 թվականի գարնանը—հետևանք եյին կուսակցության գլխավոր գծի ծռման և խոտորումների, ըստ վորում գյուղացիների նշանակալից մեծամասնությունը, վորոնք այն ժամանակ դուրս եյին յեկել կոլխոզներից—կուսակցության գլխավոր գծից այդ խոտորումները վերացնելուց հետո—նորից մտավ կոլխոզների մեջ և կառուցում է իր կոլեկտիվ տնտեսությունը։

Յերկրամասի համատարած կոլեկտիվացումն անցնում է դասակարգային կատաղի պայքարի պայմաններում—ընդդեմ կուլակի, վորը վերացվում է իբր դասակարգ։

Դասակարգային թշնամին—լիկվիդացիայի յենթարկվող կուլակը հուսահատական կռիվ է մղում համատարած կոլեկտիվացումն անցկացնելու դեմ, դրա համար ոգտագործելով բոլոր հնարավորությունները, իր ճարպկության ամբողջ ուժը և մեր բոլոր վրիպումները։

Վորքան մոտենում է մեր հաղթանակը, այնքան մեծանում է մեր թշնամու դիմադրությունը, իսկ այդ թշնամին մղում է կյանքի և մահվան պայքար։

---

[1]) Այսինքն մինչև 1931 թվականի հունվարը—Ծ. Թ.

Կոլխոզնիկները, վորոնք կառուցում են իրենց սոցիալիստական տնտեսությունը, պետք է հաստատապես գիտենան, վոր վոչ մի նվաճում նրանք չեն ձեռք բերի առանց ամենադաժան պայքար մղելու ընդդեմ կուլակի և նրա կողմնակիցների—յենթակուլակների։ Ուստի, ամենավճռական կերպով և հետևողականությամբ անցկացնելով համատարած կոլեկտիվացումը, պետք է անխնայորեն մերկացնել կուլակների պրպտումները, ստանիցաների և գյուղական խորհրդներին ցույց տալ ամենաակտիվ ոգնություն՝ կուլակի հայտնաբերման և նրան վորպես դասակարգի վերացման ասպարիզում։

«Կոլեկտիվացման համար մղվող պայքարը հանդիսանում է ամենից առաջ պայքար կուլակի դեմ, վորը կոլեկտիվացման գլխավոր, յերդվյալ թշնամին է։ Կուսակցական կազմակերպությունները՝ պետք է կազմակերպեն վոչ միայն կոլխոզնիկներին այլ և անհատականներին,—չքավորներին ու միջակներին, կուլակի դեմ վճռական հարձակման համար։ Ամբողջ ֆրոնտով կուլակի դեմ անխնա հարձակումը (հացամթերումներ, ֆինանսական ձեռնարկումներ և այլն), համատարած կոլեկտիվացման ռայոններում կուլակի լիկվիդացիան, ապակուլակացվածներին գյուղի սահմաններից տեղափոխելը—պետք է դառնա կոլխոզնիկների և անհատական չքավոր-միջակ մասսաների՝ համատարած կոլեկտիվացման համար մղած պայքարի բաղկացուցիչ մասը։ «Այժմ ապակուլակացումը կատարվում է իրենց, չքավոր-միջակ մասսաների կողմից, վորոնք իրագործում են համատարած կոլեկտիվացումը։ Այժմ ապակուլակացումը ներկայացնում է այնտեղ կոլխոզների կազմման ու զարգացման բաղկացուցիչ մասը»։

(Ս Տ Ա Լ Ի Ն)

Բոլշևիկյան յերկրորդ գարնանացանի կամպանիան յերկրամասի կոլխոզների և անհատական տնտեսությունների առաջ գործնականորեն դնում է հետևյալ խնդիրները, վորոնք Մյասնիկյան և Հայկական ռայոններում արտահայտվում են հետևյալ աղյուսակով.—(առանց սովխոզների և քաղաքամերձ տնտեսությունների)։

№№ բաց կարգի	ԻՆՉ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ե ՏՐՎԱԾ	Մյասնիկյան ռայոն		Հայկական ռայոն		Ընդամ. Հյուսիս. Կովկաս.	
		Առաջադրություն 1931 թվի	1930 թվին 1 յեռամսյակ	Առաջադրություն 1931 թվի	1930 թվին 1 յեռամսյակ	Առաջադրություն 1931 թվի	1930 թվին 1 յեռամսյակ
1	Տնտես. թիվը կոլխոզներում	3280	1600*	582	400	1,136,935	812,005
	Գյուղ. տնտ. վո՞ր տոկոսը	80,0	20,0*	35,8	27,8	83,2	54.5
	Անհատ. տնտես. թիվը	820	4066*	1074	1224	129,165	683,433
	Գյուղաց. բոլոր տնտեսութ.	410	4766	1662	1624	1,366,150	1,495,438
2	Կոլխոզն. գարնանացանը հեկտ.	27,500	18463*	1170	521	6,389,570	5,528,187
	Գյուղ. տնտ. վո՞ր տոկոսը	85,9	88,19*	55,6	26,0	88,5	— —
	Նույնը անհատակ. մոտ	4500	21950	2100	2072	833,450	2,076,485
	Ամբողջ գարնանացանը առանց սովխոզն.	32000	40,413	3270	2593	7,223,020	7,605,072
3	Կոլխոզների բանջարանոցները հեկտարներով	280	59	100	33	166,348	89,153
4	Կոլխոզային նոր պաղային այգիների անկում հկտ.	—	—	150	—	7000	
	Խաղողի այգի » »	—	—	60	—	5175	
	Պտղանոց » » »	—	—	60	—	525	
	Տնկարանները » »	—	—	42,5	—	804	
5	Լծկան ձիեր և յեզներ կոլխոզներում	5568	1028	562	319	1,216,300	837,400
6	Կովեր և յերինջներ կոլխոզներում	1000	517	200	69	108,600	68,603
7	Մեծ խոզեր (մայր) կոլխոզներում	200	35	200	3	149,000	33,166
8	Վոչխարներ և այծեր	2500	1660	300	1	1,202,800	756,200
9	ՄՏԿ-ների թիվը . . .	1	—	—	—	126	51
	Նրանցում տրակտորները	45	—	—	—	6209	2451
	Քանի ձիու ուժ ունեն	690					
	Վարելահողերի ընդգրկում	2389	—	—	—	90,089	30249
			—	—	—	3,300,000	—

Յերկրամասի գյուղացիական անհատական և կոլխոզային սեկտորում գարնանացանի ընդհանուր քանակի պակասումը

*) 1930 թվականի վերաբերմամբ բերված թվերը բնորոշ չեն, քանի վոր գարնանը կոլխոզներից նշանակալից քանակով անտեսությունների դուրս գալուց հետո դրանց ցանքերը համարվում էին վորպես կոլխոզային ցանքեր, իսկ նրանք իրենք—անհատականներ, ուստի բերված տոկոսները չեն արտացոլում իրերի իսկական դրությունը։

31 թվականին, 30 թվականի համեմատությամբ (7,223,020 հեկտար, 30 թվականի 7,605,072 հեկտարի հանդեպ) բացատրվում է նրանով, որ այս տարի յերկրամասի սովխոզներին հատկացվում է 6 միլիոն հեկտար հող, որի վրա լինելու յե 1,171,164 հեկտար սովխոզային գարնանացան, անցյալ տարվա 296,000 հեկտարի հանդեպ։

Այսպիսով գարնանացանի ընդհանուր տարածությունն այս տարի կլինի զգալի չափով ավելի անցյալ տարվանից։

Այստեղ բերված աղյուսակը փայլուն կերպով պատկերացնում է գյուղացիական անհատական տնտեսության մարումը և միաժամանակ կոլխոզային սեկտորի բուռն աճումը, իսկ կոլխոզ-սովխոզային սեկտորը ոչ միայն լիովին փոխարինում է անհատական սեկտորում կրճատված արտադրությունը, այլ և անցյալ տարվա համեմատությամբ նշանակալից չափով բարձրացնում է յերկրամասի գյուղատնտեսության բոլոր արտադրական ցուցանիշները։

Կոլխոզային շինարարության մեջ անցյալ տնտեսական տարվա հիմնական արդյունքները, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման ստուգիչ թվերը 1931 թվականի համար,—լիաչափ հերքում են աջ ուկլոնիստների «թեորիան» գյուղատնտեսության դեգրադացիայի մասին, այսպիսով իրականում հաստատելով կուսակցության գլխավոր գծի ճշտությունը։

Մեր բերած աղյուսակից յերևում է, որ մինչև այս տարվա գարունը յերկրամասում կոլեկտիվացված գյուղացիական տնտեսությունների տոկոսը կլինի վոչ պակաս, քան 83,2, անցյալ տարվա 54,5 տոկոսի հանդեպ։

Իսկ Մյասնիկյան և մանավանդ Հայկական ռայոններում կոլեկտիվացված տնտեսությունների տոկոսը ցածր է յերկրամասի կոլեկտիվացման միջին տոկոսից, այն է—80 և 35,8։

Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ այդ ռայոնները վորպես ազգային ռայոններ, կոլեկտիվացման համար պատրաստ լինելու տեսակետից պատկանում են յերկրամասի ռայոնների յերկրորդ գրուպպային, վորտեղ համատարած կոլեկտիվացումը հիմնականում պիտի ավարտվի մինչև 1931 թվականի ամառը։

Ինչ վերաբերում է յերկրամասի ռուսական ռայոններին, նրանց ճնշող մեծամասնության մեջ հենց այս գարնանը կոլեկտիվացված տնտեսությունների տոկոսը 90-ից բարձր կլինի։

Մի շարք ռայոններում արդեն առ 1-ը հունվարի կոլեկտիվացված է բոլոր գյուղացիական տնտեսությունների ավելի քան 90 տոկոսը, որինակ.—

Ադիգեյի ինքն. մարզ.	—93,8
Վերին-Դոնի	—95,2
Վյոշինսկի	—93,8
Միլլերովի	—98,0
Կաշարսկի	—98,0
Կանևսկի	—89,9
Ցեյսկի	—87,1
Կուչևսկի	—88,2
Տարասովսկի	—85,7
Պյատիգորսկ	—84,0

Միևնույնը պիտի ասել բանջարանոցների և նոր այգիների, խաղողի այգիների, տնկարանների և այլնի վերաբերմամբ, վորոնց քանակը զգալի չափով ավելանում է։

Յեթե մինչև վերջին ժամանակներս (մինչև 30 թիվը) կոլխոզային կենդանաբուծությունը սաստիկ յետ եր մնում իր զարգացման տեսակետից, ապա 1931 թվականին վոչ միայն ամրապնդվում է, այլ և նշանակալից չափով արագացնում է վճռական բեկման տեմպը կենդանաբուծության հետագա զարգացման ասպարիզում։

Այսպես որինակ, 1931 թվականին (տարեվերջին) կոլխոզներում կովերի թիվը կհասնի 108,600 գլխի, մինչդեռ 1930 թվականին յեղել է 68,000 գլուխ, իսկ 1929 թվականին —5500 գլուխ։

Մեծ խոզերի թիվը (մայր) 1931 թվականին կլինի 149 հազար գլուխ, մինչդեռ 1930 թվականին յեղել է 33166 գլուխ, իսկ 1929 թվականին—4500 գլուխ (կոլխոզներում)։

Նոյնպիսի պատկեր գոյություն ունի նաև կենդանաբուծության բոլոր մյուս տեսակների ասպարիզում։ Ցեվ տնա այս հանգամանքի շնորհիվ ե, վոր մենք լուծելու յենք մսի պրոբլեմը՝ սոցիալիստական հիմունքով։

Վերջապես, մի քանի խոսք համատարած կոլեկտիվացման ծանր հրետանու—ՄՏԿ-ների (մեքենա-տրակտորային կայանների) մասին.—

Ցեթե 1930 թվականին յերկրամասում կար 51 մեքենա-տրակտորային կայան 2451 տրակտորներով, 30,249 ընդհանուր ույժով (HP), ապա 1931 թվականին կկազմակերպվի 126 ՄՏԿ, 6209 տրակտորներով, 90089 HP (ույժով)։

Ցեթե 1930 թվականի գարնանը տրակտորները վարել են մեկ միլիոն հեկտար հող, ապա 1931 թվականին տրակտորային վարը պետք ե հասնի մինչև 3,300,000 հեկտարի։

1930 թվականի վերջում յերկրամասում յեղած տրակտորների քանակությունը հետևյալն եր.—

	տրակտորներ	HP (ույժ)
Կոլխոզներում . . .	3,997	41,752
Սովխոզներում . . .	2,005	44,655
ՄՏԿ-ներում . . .	2,451	30,249
ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայաններում) .	610	6,270
Ընդամենը	9,063	122,926

Այս թվերը,—չխոսելով դեռ այն մասին, վոր անհրաժեշտ ե հավաքել համապատասխան քանակությամբ սերմֆոնդ, կատարել սերմազտում, վերանորոգել ինվենտարը, ձեռք բերել կերի ֆոնդեր, լիակատար չափով ոգտագործել գոյություն ունեցող լծկան ուժը, բանվորական ձեռները և այլն—ցույց են տալիս, վոր մեր առաջ դրված են իսկապես հսկայական խնդիրներ, վորոնց լուծումը պահանջում ե լարել մեր բոլոր ույժերը, բատրակ-չքավորական ու միջակային մասսաների ամբողջ կազմակերպչական, ագիտացիոն, տնտեսական ընդունակությունները։

Այս խնդիրների իրագործումը հնարավոր ե միայն միաժամանակ անցկացնելով համատարած կոլեկտիվացումը, կուլակի վերացումն իբր դասակարգի։

Բատրակ-չքավոր ու միջակ ամբողջ մասսան, բոլոր կոլխոզնիկներն ու դեռ կոլխոզ չմտած անհատականները պետք ե ամենաակտիվ մասնակցություն ունենան կուլակի իբր դասակարգի վերացման գործում,—վորը կիրառվում ե կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ,—հիշելով, վոր կոլխոզային շարժման ասպարիզում վոչ մի քայլ առաջ չի կարելի անել, առանց ամենադաժան պայքար մղելու կուլակի և նրա ձայնակիցների դեմ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Համատարած կոլեկտիվացումն անցկացնելիս գյուղում վոչ մի խոշոր քաղաքական կամ տնտեսական միջոցառում չի կիրառվում առանց նախնական, հասարակական-նախապատրաստական աշխատանքի։ Ավելին — յուրաքանչյուր մասսայական միջոցառման հաջողությունն ամենաուժեղ չափով կախված է նրանից, թե վորքան լայն չափով ու խորը կերպով է կատարվել նախնական, պարզաբանական աշխատանքը, վորչա՞փ հաջողվել է ղեկավարներին՝ բացատրել չքավոր - միջակ լայն մասսաներին կիրառվող միջոցառման խնդիրներն ու նպատակները և դրա հիմունքով ուղիղ կազմակերպել իրենց, բատրակ-չքավորական ու միջակ մասսաների նախաձեռնությունն և ույժերը։

Յեթե վերոհիշյալը ճիշտ է այն բոլոր մասսայական միջոցառումների վերաբերմամբ, վորոնք գյուղում կիրառում է խորհրդային իշխանությունը, ապա այդ անհամեմատ ավելի ճիշտ է և պարտադիր է Հյուսիսային Կովկասյան յերկրամասի համատարած կոլեկտիվացման ավարտման խնդրում, վորը գործնականորեն դրված է մեր առաջ և պետք է լուծվի ամենակարճ ժամկետում, այսինքն այս տարվա գարնանացանի կամպանիայում։ Ընկ. Ա. Անդրեևը հետևյալ կերպ բնութագրեց այդ խնդիրը Ռոստովի կուսակտիվի նիստում, 1929 թվականի նոյեմբերի 23-ին.—

«Այս յերրորդ քննությունն ել իր ամբողջությամբ դրված է մեր առաջ և մենք պետք է ապացուցենք, վոր այդ քննությունը կբռնենք։ Այդ ավելի լուրջ քննություն է (քան թե այն քննությունը, վոր բանվոր դասակարդը բռնեց քաղաքացիակա-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ЭКОНОМИКИ Академии Наук СССР

60875-67

պատերազմի ժամանակաշրջանում և ՆԵՊ-ին անցնելիս.—Ս. Բ.), վորովհետև ըստ գործի եությունն. մենք կոլեկտիվացումով, գյուղատնտեսության վերակերտում վ լուծում ենք պրոլետարական հեղափոխության վերջին և ամենախոշոր հարցը—մանր սեփականատիրոջը մեր սոցիալիստական շինարարության մեջ գրավելը։ Դեպի սոցիալիզմը տանող ճանապարհին սա ամենավերջին և ամենադժվար արգելքն է»։

Վորպեսզի բռնել այդ քննությունը, վորպեսզի կազմակերպել կոլխոզներ ամբողջ ստանիցաների, գյուղերի և աուլների ընդգրկումով,—պետք է ծավալել մասսաների չտեսնված շարժումը, հիմք ունենալով հասարակական-քաղաքական, ագրոպրոպագանդիստական և հասարակական-կազմակերպչական չտեսնված աշխատանքը։

Մինչև գարնանացան, կամպանիայի սկիզբը մնացած ժամանակվա ընթացքում բոլոր կուլտուրական աշխատողների և բոլոր ակտիվի, այն է՝ կուսակցականների, կոմյերիտականների, բանվոր դասակարգի, կոլխոզ-կոոպերատիվային և չքավոր-միջակ ակտիվի, ուսուցիչների, բարձր խմբերի աշակերտության, բժիշկների, գյուղատնտեսների և այլն ույժերն և ուշադրությունը պետք է զորահավաքվի և ամենամեծ չափով ոգտագործվի համատարած կոլեկտիվացումն իրագործելու համար։

Գյուղացիական չքավոր-միջակ մասսաների մեջ հասարակական-նախապատրաստական աշխատանքը գործնականորեն կատարելիս, հին, տեղական կոլխոզների գործնական փորձի ոգտագործումը հսկայական նշանակություն ունի։

Վոչ մի դասագիրք, վոչ մի ձեռնարկ չի կարող պատասխան տալ այն բոլոր անսպասելի և նենգամիտ հարցերին, վորոնք շատ հաճախ տրվում են յենթակուլակների կողմից։ Այստեղ հարկավոր է ամենամեծ չափով ոգտագործել հին կոլխոզների ու կոլխոզնիկների գործնական փորձը, և ամենավճռական հակահարված տալ կուլակային ագենտների այդպիսի յելույթներին, մեր կողմը գրավելով անհատական տնտեսատերը չքավոր-միջակ գյուղացիներին։

Կարողանալ ընտրել ամենահեղինակավոր, հին կոլխոզնիկներին, վորոնք գիտեն խելքը կերպով պատմել կոլխոզի կյանքի ու կենցաղի մասին—սա հասարակական-նախապատրաստա-

ZUUՌ-ԱԲՄ ԳԳ Ա. Հ. Մ. Բ. Մ. ՄՅՍՍ

կան աշխատանքներն անցկացնելու կարևորագույն մոմենտներից մեկն է։

Անհրաժեշտ է ապահովել հասարակական-նախապատրաստական աշխատանքի այնպիսի բովանդակություն ու թափը, որպեսզի կոլեկտիվացման առաջիկա ամբողջ ժամանակաշրջանի, այլ և կոլեկտիվացման ընթացքում յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանում, յուրաքանչյուր գյուղխորհրդում, թաղում, տանը, յուրաքանչյուր ժողովում կամ նիստում, յուրաքանչյուր հանդիպումի ժամանակ, ուղղակի ամեն որ—դեռ ևս կոլխոզ չմտած գյուղական չքավոր-միջակ մասսան հետաքրքրվի, քննի, կշռադատի և պարզի մինչև ուղն ու ծուծը, թե ի՞նչ բան են կոլեկտիվացման խնդիրներն ու նպատակները, իր իրավունքներն ու պարտականությունները կոլխոզում, վերջինիս կառավարման կարգը, կոլխոզի տնտեսական հանրագումարը 1930 թվականին, արտադրական ծրագրները գալիք տարվա համար, աշխատանքի կազմակերպումը, աշխատանքի վարձատրման սկզբունքները,—մի խոսքով, կոլխոզի յուրաքանչյուր ձևի (կոլխոզ-արտել, կոլխոզ-կոմունա) ներքին կարգապահության կանոնադրությունն և կանոնների բոլոր բաժինները։

Գյուղի հիմնական, չքավոր-միջակ մասսաներին կոլխոզների ներքին կյանքի բոլոր կողմերի հետ մանրամասն ծանոթացնելու անհրաժեշտությունը բղխում է նրանից, որ—

Նախ՝ համատարած կոլեկտիվացման հսկայական խնդիրները չի կարելի իրագործել միայն կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ կազմակերպությունների ույժերով,—նույնիսկ վերջիններիս առավել հնարավոր կազմակերպվածության և ակտիվության դեպքում։ Հիմնականում աշխատանքը պիտի դրնել արթնացող և շարժման մեջ առնվող չքավոր-միջակ մասսաների, կոլխոզ՝իկների, այլ և դեռևս կոլխոզից դուրս գրտնվող անհատականների նախաձեռնության և յեռանդի վրա, մի բան, որն առանց նրանց հեղափոխական շարժման, այսինքն չտեսնված հասարակական-նախապատրաստական աշխատանքի չի կարելի անել։

Յերկրորդ՝ միայն այն դեպքում կոլխոզները կկարողանան ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել իրենց բոլոր տնտեսական անկանոնությունները և սխալները, իսկապես բարձրացնել նրա յեկամտաբերությունը, սոցիալիստական վերա-

կերտման հիմունքով,—յեթե իրենք, կոլխոզնիկները ակտիվ մասնակցություն ունենան կոլխոզի կյանքում, նրա մեջ մրտնելու հենց առաջին որերից, մի բան, որ անկարելի յե առանց վերը հիշված նախապատրաստական աշխատանքի։

Յերրորդ՝ ինչպես ցույց տվեց համատարած կոլեկտիվացման մեկ տարվա փորձը, խոշոր կոլեկտիվ տնտեսությունները վարելու համար,—որոնք ընդգրկում են ամբողջ ստանիցաներ և գյուղեր,—յերկրամասի սահմաններում կպահանջվեն տասնյակ հազարավոր կոլխոզային կադրեր, զանազան աստիճանների պատրաստություն և վարակավորում ունեցող ղեկավարներ։ Տվյալ ժամանակում վորևե բավարար քանակով այդպիսի կադրեր մենք չունենք և այն ոգնությամբ, որը մենք կստանանք ֆաբրիկաներից և գործարաններից, իբր բանվորական բրիգադներ և այլն—չենք կարող բավարարել այդ պահանջը։

Այդ կադրերը հիմնականում պետք է գտնվեն կոլխոզնիկների, չքավոր-միջակ ակտիվից, իսկ նրանց չի կարելի հայտաբերել և պատրաստել առանց վերը հիշված հասարակական-նախապատրաստական աշխատանքի. վերջապես—

Չորրորդ՝ միայն նախնական, խորը, պարզաբանական աշխատանքի դեպքում,—յերբ կոլխոզնիկներին վաղորոք հայտնի կլինեն կոլխոզների վոչ միայն ոգուտները, այլ և նրանց առորյա բոլոր դժվարությունները,—կոլխոզներում քիչ կլինեն ամեն տեսակ թյուրիմացություններն ու անկանոնությունները, իսկ կոլխոզի անդամների հիմնական մասսան հաստատապես կմիաձուլվի։

Փոքր գրքույկում նախատեսել բոլոր մանրամասնություններով հասարակական-նախապատրաստական աշխատանքի ետապների հետևողականությունն ու բովանդակությունը,—այդ իհարկե անկարելի յե, բայց այստեղ հիմնականը մեր կարծիքով հետևյալն է.—

Գյուղում գոյություն ունեցող կոլխոզի վարչությունը, կամ յեթե գյուղում մի քանի կոլխոզներ կան, նրանց վարչությունները այդ հարցը գործնականապես լուծելու տեսակետից դնում են Համկոմկուսի (բ) տեղական բջիջի բյուրոյի նիստում, կուսակցական-կոմյերիտական ակտիվի հետ միասին։

Այդ նիստում քննվում է միայն մի հարց,—տվյալ գյուղի

(սահմանային, առվի) համատարած կոլեկտիվացման պլանն ու մեթոդները։

Պլանը քննվում է իր հիմնական մոմենտներով. ավելի մանրամասն կանգ է առնվում այն մասերի վրա, որոնք ամենից շատ են հետաքրքրում տեղական աշխատողներին։

Այդ զեկուցման մեջ պիտի լինեն, որինակ, հետևյալ մասերը.

1) Ցերկրամասում սովխոզային և կոլխոզային շինարարության դրությունը 1930 թվականին և սովխոզների ու խոշոր կոլխոզների առավելությունները մանր կոլխոզների և անհատական տնտեսությունների հանդեպ։

2) Առանձին տրակտորների և սրանց գրուպպաների (կոլոնաների) աշխատանքը և մեքենա-տրակտորային կայանների դերը խոշոր կոլխոզշինարարության մեջ։

3) Կենտրոնական ու յերկրային կառավարական ու դիրեկտիվային կազմակերպությունների վորոշումները Հյուսիսային Կովկասում մինչև 1931 թվականի գարունը կատարվելիք համատարած կոլեկտիվացման մասին և մեր խնդիրները։

4) Կոլեկտիվացման դրությունը գյուղում (սահմանիցայում կամ առվում) և գյուղի համատարած կոլեկտիվացման մոտավորապես վերցրած պլանը։

Վերջին մասում պետք է կանգ առնել հետևյալ մոմենտների վրա.—

1) Խոշոր կոլխոզի չափերի հիմնական ցուցանիշները,—տնտեսությունների թիվը, շնչերի, հողի, լծկան անասունների, մթերատու անասունների, գյուղատնտեսական բարդ մեքենաների քանակը, վորոնք կան բնակչության մոտ և յենթակա յեն համայնացման։

2) Նախագծած կոլխոզի ամենից հավանական ձևն ու տեսակը։

3) Տերրիտորիայի և ցանքաշրջանի կազմակերպման նշումներ։

4) Աշխատանքի կազմակերպման նշումներ և նրա վարձատրման սկզբունքները։

5) Կոլեկտիվացման պլանը կիրառելու մեթոդներ, կուլակների հայտնաբերում և սրանց ու յենթակուլակների չեզոքացում։

Զեկուցման այս կետերը քննելուց հետո, անհրաժեշտ է ընտրել կամ նշել համատարած կոլեկտիվացմանն աջակցող կոմիսիայի անդամներին — ամենից ավելի հեղինակավոր, տեղական կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ աշխատողներին, ինչպես նաև իրենց, գյուղացիների միջավայրից (բատրակությունից, չքավորներից ու միջակներից) և հեղինակավոր կոլխոզնիկներին։

1. ԱՋԱԿՑՈՂ ԿՈՄԻՍԻԱՅԻ ԱԶԽԱՏԱՆՔԸ

Աջակցող կոմիսիան աշխատում է Համկոմկուսի (բ) տեղական բջիջին կից, նրա ղեկավարությամբ։

Կոմիսիայի կազմը պիտի լինի 7-9 հոգուց վոչ ավելի։

Աջակցող կոմիսիան նշում և գումարում է թաղային չքավոր-միջակային ժողովներ, կանանց պատգամավորական կամ թաղային ժողովներ, ավյալ գյուղի պրոֆակտիվի կամ արհմիությունների բոլոր անդամների ժողովներ։ Աջակցող կոմիսիան ղեկավարում է յուրաքանչյուր թաղում, գոյություն ունեցող կոլխոզներից ամեն մեկում կազմակերպվող նախաձեռնող խմբակների աշխատանքը։

Աջակցող կոմիսիան համապատասխան կազմակերպությունների միջոցով, հասարակական աշխատանքի կարգով ներգրավում է գյուղի բոլոր կուլտուրական, հասարակական աշխատողներին,—կուսակցականներին, կոմսոմոլին, ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և այլն,

Հետագայում թե բանվորական ագրո-բրիգադայի և թե աջակցող կոմիսիայի անելիքը հասարակական-նախապատրաստական աշխատանքի ու գյուղի համատարած կոլեկտիվացման ասպարիզում բաժանվում է յերկու մասի.—

1) Կազմակերպչական-պլանային և*)

2) Ագիտացիոն։

ա) ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ—ՊԼԱՆԱՅԻՆ ԽՄԲԱԿԻ ԱԶԽԱՏԱՆՔԸ

Կազմակերպչական-պլանային խմբակի մեջ մտնում են տեղական բոլոր ագրո-աշխատողները, ուսուցիչների և կոմյե-

*) Եթե համատարած կոլեկտիվացումն անցկացնելիս նոր կոլխոզներ չեն կազմակերպվում, ապա աջակցող կոմիսիային կից կազմակերպչական-պլանային խմբակ չի ստեղծվում, այլ նրա ամբողջ աշխատանքը կատարում են գյուղատնտեսն ու լեղած կոլխոզների գրասենյակները։

բիտականների մի մասը, վորը կարող ե ոգնել խոշոր կոլխոզի համար վերակառուցողական միջոցառումների և արտադրական պլանները կազմելիս։

Կազմակերպչական-պլանային խմբակն աշխատում ե գյուղատնտես-կազմակերպչի ղեկավարությամբ, հավաքում ե բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ու թվական տվյալները և տեղում կազմում ե 1931 թվականի համար խոշոր կոլխոզի վերակառուցողական միջոցառումների և արտադրական պլանները, համաձայն յերկրամասից տրված ձևերի։

Կազմակերպչական-պլանային խմբակի ղեկավարը մշտական կապ ե պահում ագիտացիոն խմբակի հետ, ոգնում ե նրան իր խմբակից մշակված մատերիալներ տալով զեկուցումների համար և հնարավորության կամ առանձին անհրաժեշտության դեպքում (առանձնապես պահպանողական թաղ) ինքն ե զեկուցում անում, կամ ուրիշ ագիտատորների հետ մեկտեղ յելույթ ե ունենում վորտեղ պետք ե։

բ) ԱԳԻՏԱՑԻՈՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ագիտացիոն խմբակը հանդիսանում ե կոլեկտիվացման պրոցեսսում մասսաների անմիջական ներշնչողն ու ղեկավարը։ Այս խմբակը կազմվում ե գյուղի բոլոր աշխատողներից, վորոնք լինում են թե աջակցող կոմխիայում և թե նրանից դուրս, բայց վորոնք կարող են լավ ու համոզիչ կերպով պատմել մասսաներին կոլխոզային կյանքի բոլոր կողմերի, կոլեկտիվացման պրոցեսսի մասին, կարճ ասած՝ վորոնք կարող են լինել խոշոր կոլխոզի համար գործնականորեն ագիտացիա մղող, կոլխոզի անդամներ ներգրավելու գործում ինիցիատիվ խմբակների կազմակերպիչներ և ղեկավարներ և այլն։

Իր հիմնական գծերով ինիցիատիվ խմբակի աշխատանքը հետևյալն ե լինելու.—

Նա հետևյալ ժողովներն ե անցկացնում համատարած կոլեկտիվացման հարցերի շուրջը։

1) Ընդհանուր-գյուղական, կուս-կոմյերիտական,

2) Թաղամասերում—բատրակ-չքավորական-միջակային։

3) Ընդհանուր ժողովներ առանձին կոլխոզներում։

4) Կոլխոզ-կոոպերատիվային ակտիվի համագյուղական ժողովներ։

5) Կանանց—թաղային

6) Կանանց պատգամավորական-համագյուղական։

7) Միլիմիութենական պրոֆակտիվի—համագյուղական։

8) Բոլոր կազմակերպությունների և թաղերի համագյուղական ժողովներ, վորտեղ ընդունվում ե ընդհանուր վորոշում —համաձայնություն՝ գյուղում համատարած կոլխոզ կազմակերպելու մասին։

Համագյուղական ժողովի համար լիազորներ ընտրվում են թաղային ժողովներում, որինակի համար, 16 տարեկանից վեր ամեն մի 10 հոգուց մեկ լիազոր։

Բոլոր վերոհիշյալ ժողովներում, վորպես կանոն, դրվում ե համատարած կոլեկտիվացման հարցը։

Զեկուցումների բովանդակությունը հիմնականում զուգադիպում ե կուս-կոմյերիտական ակտիվի հետ մեկտեղ գումարված կուսակցական բջիջի բյուրոյի զեկուցման բովանդակության հետ, սակայն զեկուցման առանձին մասերը առանձնապես խորը պիտի քննվեն, վորի համար հարկավոր կլինի այդ զեկուցումը դնել մաս-մաս, յերկու-յերեք անգամ։

Առանձնապես մանրամասն պետք ե քննել հետևյալ մոմենտները.

1) Խոշորացնե՞լ գյուղում գոյություն ունեցող կոլխոզները՝ ներգրավելով նրանց մեջ նոր կոլեկտիվացող տնտեսություններին, կամ թե կազմակերպել նոր կոլխոզներ։

Այս հարցը վճռելիս պետք ե ի նկատի ունենալ, վոր նոր կոլխոզներ կազմակերպելու համար վոչ մի արգելք չի կարելի հարուցել։

2) Նախագծված կոլխոզում գյուղատնտեսության ճյուղերի համայնացման չափը և այն միջոցների քանակությունը, վորոնք ներդրվում են իրեն, բնակչության կողմից։

3) Տերրիտորիայի, ցանքաշրջանի կազմակերպման սկզբունքներն ու ինվենտարի ոգտագործման կազմակերպումը։

4) Աշխատանքի կազմակերպումն ու վարձատրությունը։

5) Անաշխատունակների և հիվանդների ապահովումը։

6) Կոլխոզի գործերի կառավարումն և այլն։

Յուրաքանչյուր ժողով (կանանց, թաղային և այլն) անցկացնելուց հետո, տվյալ ժողովի մասնակիցներից կազմվում են ինիցիատիվ խմբակներ, որոնք հրահանգներ են ստանում ագիտացիոն խմբակի պատասխանատու աշխատողներից և մեկ-մեկ, կամ 2-3 հոգուց բաղկացած խմբակներով գնում են տները, անհատապես նախապատրաստելու գյուղացիներին և համատարած կոլխոզի անդամներ գրավելու։

Յուրաքանչյուր թաղում նախաձեռնող խմբակներ կարող են լինել մի քանիսը, որը վնաս չի տալիս գործին։ Պետք է միայն ապահովել նրանց ճիշտ հրահանգներ տալն ու նրանց աշխատանքի ճշգրիտ հաշվառումը։

Ամենապահպանողական ու համառ թաղերը պետք է ուղարկել ամենաուժեղ և ամենահեղինակավոր նախաձեռնող խմբակներ և զեկուցողներ։

Յեթե հարկավոր լինի, այդպիսի թաղերում ժողովներ պիտի գումարել ու անցկացնել մի քանի անգամ (մինչև 8-10 անգամ)։

Վոչինչ, յեթե այս կամ այն թաղում մի անգամից չհաջողվի վերջնական արդյունքների հասնել։ Այդ դեռ ևս ամենևին չի ապացուցում, որ տվյալ գյուղացոց չի կարելի կոլեկտիվացնել։ Այդ կնշանակե, որ տվյալ թաղերում գոյություն ունի կուլակության առանձնապես համառ դիմադրությունն և նրա ագիտացիան կոլխոզի դեմ։

Պարզ է, որ այստեղ բավականաչափ խորը և մտածված աշխատանք չի տարվել բատրակության և չքավորության մեջ, պարզ է, որ հարկ կլինի այստեղ խորացնել աշխատանքը չքավորության մեջ, անցկացնելով հատուկ ժողովներ և դնելով զեկուցումներ։

Այդպիսի թաղերում չքավորության մեջ նախապես ուժեղ աշխատանք կատարելուց հետո թաղային ժողովներ պիտի գումարել ուրիշ տեղում, ուրիշ ժողովականների մասնակցությամբ, այսինքն մասնակի կերպով փոփոխել թաղի սահմանները (յերկու թաղերի ժողովների գումարում և այլն), կամ թե ժողովներն անցկացնել թաղերի առանձին մասերում և այդ ժողովներն ուղարկել նորանոր զեկուցողներ, ավելի հեղինակավոր ընկերներ և այլն։ Կուլակության դեմ մղվող պայքարում հենվել այն թաղերի վրա, որոնք արդեն վորոշում են կայացրել կոլեկտիվացման մասին։

Կարճ ասած՝ պետք է գործադրել ամենամեծ չափով նախաձեռնություն և հաստատակամություն, վորպեսզի ապահովել ամբողջ գյուղի (առանց կուլակների) լիակատար կոլեկտիվացումը, լիակատար կամավորության հիմունքով։

Մի քանի ստորին աշխատողներ դատում են մոտավորապես հետևյալ կերպ.—«քանի վոր կոլեկտիվացումը կամավոր բան է, ապա ուրեմն ել կարիք չկա առանձնապես կպչել հասարակական նախապատրաստական աշխատանքի։ Յեթե գյուղացին ինքը ցանկանում է մտնել կոլխոզ, ապա նա առանց այդ ել կմտնի»։

Այդպիսի աշխատողները մոռանում են, որ դա տիպիկ աջ-ոպորտունիստական դատողություն է, որ դա ինքնահոսի վրա հույս դնել է, որ դա ջուր է լցնում միայն մեր դասակարգային թշնամու—կուլակի ջրաղացին։

Հենց բանն ել նրանումն է, որ հարկավոր է ամեն կերպ ապացուցել, պարզաբանել, համոզել գյուղացիական չքավոր-միջակ մասսաներին, որ անհրաժեշտ է կազմակերպել կոլխոզ։

Ահա թե ինչու միանգամայն անհրաժեշտ է մասսայական հասարակական աշխատանքը գյուղացիական չքավոր-միջակ մասսաների մեջ։

Յերբ այդ բանը կատարվի, յերբ այդ մասսաները համոզվեն, թե վորչափ ոգտակար է կոլխոզային տնտեսությունը, այն ժամանակ, իհարկ է, նրանք իրենք կամավոր կերպով կըմտնեն կոլխոզ և կկառուցեն կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսությունը։

> Պետք է ծավալել վճռական պայքար։ Չքավորների և միջակների մեջ պետք է լայնորեն ժողովրդականացնել 5 տոկոսանի հատկացումը, որը սահմանված է կոլխոզներում, այն կոլխոզնիկներին պրեմիաներ տալու համար, որոնք համայնացնում են իրենց լծկան անասունն և ինվենտարը, պետք է պարզաբանել, որ նրանք, որոնք կոլխոզ մտնելուց առաջ չարաժտորեն կծախծխեն իրենց լծկան անասունն և ինվենտարը, կոլխոզ չեն ընդունվի։ (Կ. Կ. վորոշումից)

Պահպանողական թաղերում կուլակության ագենտների դիմադրությունը չախչախելու համար շատ ոգտակար կլինի, յեթե պատգամավորություններ ուղարկվեն թաղային, կանանց

և այլ ժողովուրդներից, ծանոթանալու համար այն մերձակա կոլխոզների կյանքին ու կենցաղին, վորոնք ցույց են տվել իրենց առավելությունները տեղական բնակչության։

Կուսկազմակերպությունները համատարած կոլեկտիվացման իրագործման ասպարիզում իրենց աշխատանքի սիստեմում պետք է լայն կերպով ոգտագործեն աշխատանքի այն նոր կազմակերպչական ձևերն ու մեթոդները, վորոնք հայտնաբերվել են անցած աշնան փորձից, ամենից առաջ կոլխոզների կազմակերպման համար նախաձեռնող խմբակների ստեղծումը, կոլխոզնիկների, սրանց հետ նաև վոչ կոլխոզնիկների բուկսիրային բրիգադների կազմակերպումը, կոլխոզ գրավող կոմիսիաների ստեղծումը, կոլխոզային և վոչ կոլխոզային յերիտասարդության հավաքները և այլն։ Կոլեկտիվացման ղեկավարման, — կոլխոզների մեջ նոր հոսանքի պայմաններում նրանց կազմակերպման գործում կուսակցական կազմակերպությունները պետք է ծավալեն մասսայական կազմակերպչական աշխատանք արտելի շուրջը, վորպես կոլխոզի հիմնական ձևի, վճռականապես պայքարելով նրանց դեմ, ով սահմանափակում է նոր կոլխոզների կազմակերպումն այն գյուղերում, վորտեղ այժմ արդեն կոլխոզներ գոյություն ունեն։

Սահմանափակելով նոր կոլխոզների կազմակերպումը, կուսակցական կազմակերպություններն ու կոլխոզային սիստեմը պետք է ապահովեն մանր կոլխոզների սիստեմատիկ խոշորացումը—թե նրանց համախմբելով և միացնելով ավելի խոշորներին և թե չքավոր միջակ ու անհատական տնտեսությունների հետագա կոլեկտիվացումով։

Կոլխոզները մեծացնել պետք է անպայման լիակատար կամավորության հիմունքով, իսկական տնտեսական նպատակահարմարության պայմաններում, հաշվի առնելով առանձին համախմբվող կոլխոզների տնտեսական մակարդակն և տեխնիկական բազան։

(ԿԿ ի վորոշումից)

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՌԱՋ Ի՞ՆՉ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԴՐՎԱԾ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Ամենից առաջ յուրաքանչյուր կոլխոզին հարկավոր է կազմել պարզ և բոլոր կոլխոզնիկների համար հասկանալի պլան՝ ցանքի կամպանիան անցկացնելու համար, կամ կոլխոզի արտադրական պլան։

Յեթե անհատականի մանր տնտեսությունը կարող է կառավարվել պրիմիտիվ յենթադրություններով, վորոնք կան ամեն մի գյուղացու գլխում, ապա կոլխոզների վերաբերմամբ բոլորովին այլ պատկեր գոյություն ունի։

Վոչ մի կոլխոզ չի կարող լավ անցկացնել և վոչ մի տընտեսական կամպանիա, առավել ևս գարնանացանի կամպանիան, —յեթե նա իր ժամանակին և ճշտությամբ չկազմի իր արտադրական պլանը։

Կոլխոզի արտադրական պլանը պիտի նախատեսի նրա տնտեսական կյանքի բոլոր տարրերը, որինակ, վո՞ր տեղ, ինչ, վո՞ր քանակությամբ ցանել, ինչպիսի սերմացու ցանել, ինչպես և ինչ քանակությամբ ստեղծել, տեսակավորել, զտել սերմացուի ֆոնդը, ինչ քանակությամբ ցանիչներ, ցաքաններ, դուբաններ, արաբաներ կպահանջվեն, սրանցից ինչքա՞ն կա կոլխոզում, ինչպես ձեռք բերել պակասող քանակությունը, ինչպես վերանորոգել հին ինվենտարը, ինչպես նախապատրաս-

տել լծկան անասունը աշխատեցնելու համար, կոլխոզնիկներից ով և ինչ պիտի անի աշխատանքների ժամանակ և այլն և այլն։

Կարճ ասած՝ կոլխոզի արտադրական պլանը կոլխոզի արտադրական բոլոր միջոցների ու հնարավորությունների (քարշող ուժ, սերմացու, գութաններ, ցանիչներ, բանվորական ձեռներ և այլն) նախնական ու լիակատար հայտաբերման ու հաշվառման հիմունքով պիտի նախատեսի, թե ինչպե՞ս անել, որ ամենից ուղիղ ոգտագործել արտադրության բոլոր միջոցները, որպեսզի լիակատար չափով իրագործել ցանքերի լայնացումը, գարնանացանի ժամանակին անցկացումը և նրա հիմունքով ամրապնդել կոլխոզի տնտեսությունը, լիակատար չափով կատարելեկառավարության առաջադրությունը գյուղատնտեսական մթ ըքների արտադրության մասին։

Ինչպես յերևում է, կոլխոզի համար արտադրական պլան կազմելը, որպիսի պլանը ճշտորեն հաշվի յե առնում և կապակցում է կոլխոզի բոլոր հնարավորությունները, նրա տնտեսական մակսիմալ ուժեղացման նպատակով,—այդ պլանը կազմելը այնքան էլ հեշտ բան չէ, մանավանդ այն մարդկանց համար, որոնք բավականաչափ փորձ չունեն այդ ասպարիզում։

Այս պատճառով արտադրական պլանները սովորաբար կազմվում են գյուղատնտեսի կողմից, այս պատճառով պետք է լավ հիշել, որ ով էլ կազմի կոլխոզների արտադրական պլանները, անպայման անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ կոլխոզային մասսան ամենաակտիվ, ավելի ճիշտ՝ անմիջական մասնակցություն ունենա այդ պլանները կազմելուն։

Հարկավոր է, որպեսզի արտադրական պլանի բոլոր հիմնական մասերը,—ցանքատարածությունների չափերը, ցանելու նորմաները, մշակույթի նորմաները և այլն—քննվեն ինչպես կոլխոզնիկների արտադրական խորհրդակցություններում, նույնպես և կոլխոզնիկներից կազմված հատուկ կոմիսիաներում, որոնք եյական ուղղումներ կմտցնեն այդ պլանների նշումների մեջ։

Գործնականորեն հարկավոր է, որպեսզի կոլխոզի արտադրական խորհրդակցությունը իր միջից ընտրե մի քանի կոմիսիաներ, կամ բրիգադներ, բաղկացած ամենաակտիվ, տնտեսապես հմուտ անդամներից, մշակելու և պատրաստելու համար առանձին մասերը (պլանի)—արտադրական պլանի հարցերը, որինակ՝ ա) կոլխոզի տերրիտորիայի կազմակերպման կոմիսիա, որը պիտի որոշի, թե որտեղ և ինչ ցանել, ցանքատարածությունը ինչպիսի մասերի բաժանել մեկ բանվորական բրիգադայով մշակելու հարմարության համար, բ) մեռած ինվենտարի և գյուղատնտեսական մեքենաների կազմակերպման կոմիսիա, որը պիտի պարզե ինվենտարի վերանորոգման չափը և վերահսկողություն ունենա այդ վերանորոգման վրա, գ) կերի ֆոնդերը հայտնաբերող կոմիսիա, որը պիտի որոշի, թե ինչպես խնայողությամբ ծախսել կերը թե նախացանքային և թե ցանքային ժամանակներում, դ) աշխատող ձեռների իսկական պաշարը հայտնաբերող կոմիսիա, որը փաստորեն պիտի աշխատի թե գարնանացանի, թե պրոպաշնի կուլտուրաների մշակման և թե հացահատիկների հավաքման ու կալման ժամանակ։ Բանվորական ձեռքերի իսկական քանակության հայտնաբերումը, որոնք պիտի աշխատեն փաստորեն,—չափազանց կարևոր է։ Պետք է իմանալ, թե կոլխոզնիկներից քանի հոգի իսկապես պիտի աշխատի, քանի որ առանց այդ գիտենալու և վոչ մի տնտեսություն ճիշտ պլանավորել չի կարելի։

Մի խոսքով, պետք է ստեղծել այնքան կոմիսիաներ, որքան որ պետք կլինի կոլխոզի արտադրական պլանի հիմնական հարցերը մշակելու համար։

Այդ կոմիսիաներն ոժանդակիչ դեր են կատարում և աշխատում են կոլխոզի վարչության նախագահի կամ անդամների ցուցմունքներով, արտադրական պլանը կազմող գյուղատնտեսի ղեկավարությամբ։

Ամեն որ յուրաքանչյուր կոմիսիա կազմում է իր աշխատանքների հանրագումարը և վոչ ուշ, քան 3-4 որը մի անգամ վարչության ժողովում բոլոր կոմիսիաները զեկուցում են իրենց աշխատանքի մասին և քննում են կազմակերպչական—պլանային խմբակի (գյուղատնտեսի) աշխատանքը՝ արտադրական պլանը կազմելու ասպարիզում։

Յերբ մոտավոր կոպիտ պլանն արդեն պատրաստ է, քննվում է արտադրական խորհրդակցության մեջ։

Արտադրական խորհրդակցությունը կարող է ստիպել վերափոխել պլանի առանձին մասերը, կամ ամբողջ պլանը։

Վերջապես, յեթե պլանը բոլոր ուղղություններով հանդերձ պատրաստ է, քննվում և ընդունվում է ընդհանուր ժողովում, վորից հետո ուղարկվում է ռայկոլխոզմիությանն հաստատության։

Արտադրական պլանը կազմելու նման կարգի դեպքում, վերջինս չի լինի մեռած պլան և բոլոր կոլխոզնիկները պարզ կերպով կգիտենան թե իրենց կոլեկտիվ տնտեսության չափերը, թե իրենցից յուրաքանչյուրի անելիքը, ինչպես նաև կգիտենան, թե այդ անելիքների համար ինչ պիտի ստանան։ Պետք է ի նկատի ունենալ միայն մի բան, վոր նախապատրաստական աշխատանքներն ու արտադրական պլանի կազմումը (կոմիսիաների աշխատանքը և այլն) կատարվում են միաժամանակ կոլխոզների մեջ ներգրավելով նորանոր անդամների, այն հաշվով, վոր յերբ շատ թե քիչ չափով պարզվի կոլխոզնիկների թիվը, պլանը վերջնականապես պատրաստ լինի։

Սակայն մյուս կողմից, չպետք է շատ յերկար սպասել, մինչև վոր վերջնականապես պարզվի կոլխոզնիկների թիվը, թե չե կարող է այնպես պատահել, վոր մինչև գարնան աշխատանքների սկիզբը ուշանա պլանը։

Պետք է դրությունը հաշվի առնել այնպես, վոր վոչ ուշ, քան գարնանային աշխատանքներից մեկ ամիս առաջ կոլխոզի արտադրական պլանը պատրաստ լինի և ընդունված լինի ընդհանուր ժողովի կողմից, վորից հետո դադարեցվում է կոլխոզում անդամների ընդունելը մինչև ամառը։ Կոլեկտիվանալ ցանկացողները, յեթե չեն կարողացել ժամանակին մտնել կոլխոզ, պետք է առանձին կոլխոզ կազմակերպեն։

Արտադրական պլանը կազմելիս պետք է հաստատապես հիշել և սխալներ չկատարել,—այսինքն չկազմել շատ մեծ, անիրագործելի պլաններ, հույս դնելով պետությունից ստացվելիք վարկերի, մեքենաների, անասունների վրա և այլն։

Վոչ մի էլյուզիա և վոչ մի ինքնախաբեություն չպիտի լինի։ Պետք է գլխավորապես հույս դնել սեփական, կոլխոզային միջոցների վրա, կոլեկտիվացող ազգաբնակության միջոցների վրա, վորոնց զորահավաքմանը պետք է բացառիկ ուշադրություն դարձնել։

Կողմնակի վարկերի և ոգնության վրա պետք է հույս դնել միայն վորպես լրացուցիչ միջոցների, այն ել այն չափերով, վորոնք ռայոնական կոլխոզմիության կողմից նշանակված են տվյալ կոլխոզի համար։

Ավելին չպիտի սպասել, վորովհետև կարելի յե այդպիսի միջոցներ չստանալու դեպքում դառը կերպով հիասթափվել։

Իսկ յեթե կոլխոզին իսկապես ավելի շատ վարկ է հարկավոր, քան թե նրա համար ծրագրել է ռայոնական կոլխոզմիությունը, ապա ուրեմն պետք է ապացուցել այդ հանգամանքը և հաջողեցնել, վորպեսզի փոխվեն վարկավորման գումարները։

Տվյալ կոլխոզի համար առանց լրացուցիչ վարկավորում ստանալու, չպետք է հիմնական ներդրումներ ծրագրել ի հաշիվ վարկերի։

Կոլխոզում գարնանացանի կամպանիային պատրաստվելիս արտադրական պլանը կազմելու ժամանակ պետք է կանգ առնել հետևյալ մոմենտների վրա.—

ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Գարնանացանի կամպանիայի հաջող անցկացումը կախված է աշխատանքի ճիշտ կազմակերպումից, իսկ վերջինս սերտ կապակցության մեջ է գտնվում կոլխոզի տերրիտորիան ուղիղ կազմակերպելու հետ։

Ի նկատի ունենալով այս հանգամանքը, անհրաժեշտ է, վորպեսզի վաղորոք մշակվեն տերրիտորիայի կազմակերպման հարցերը։

Վերջինս սովորաբար սկսվում է գյուղատնտեսական ձեռնարկությունների (ագարակներ, խոտհարք, հերկեր և այլն) պլանավորումից, վորով սահմանվում է նրանց չափը։ Ագարակային հողերի տարածությունները կարող են լայնացվել անհրաժեշտ համայնացված շենքերի համար (գարաժներ, հացահատիկային պահեստներ, անասնաբակեր, խոզանոցներ և այլն)։

Վարելահողերի տարածությունները սովորաբար սահմանվում են ըստ այն հանգամանքի, թե վորչափ ուժեղ են արտադրության միջոցները (մեքենայական քարշող ուժ կամ

Վերջապես, յեթե պլանը բոլոր ուղղություններով հանդերձ պատրաստ է, քննվում և ընդունվում է ընդհանուր ժողովում, որից հետո ուղարկվում է ռայկոլխոզմիությանն հաստատության։

Արտադրական պլանը կազմելու նման կարգի դեպքում, վերջինս չի լինի մեռած պլան և բոլոր կոլխոզնիկները պարզ կերպով կգիտենան թե իրենց կոլեկտիվ տնտեսության չափերը, թե իրենցից յուրաքանչյուրի անելիքը, ինչպես նաև կգիտենան, թե այդ անելիքների համար ինչ պիտի ստանան։ Պետք է ի նկատի ունենալ միայն մի բան, որ նախապատրաստական աշխատանքներն ու արտադրական պլանի կազմումը (կոմիսիաների աշխատանքը և այլն) կատարվում են միաժամանակ կոլխոզների մեջ ներգրավելով նորանոր անդամների, այն հաշվով, որ յերբ շատ թե քիչ չափով պարզվի կոլխոզնիկների թիվը, պլանը վերջնականապես պատրաստ լինի։

Սակայն մյուս կողմից, չպետք է շատ յերկար սպասել, մինչև որ վերջնականապես պարզվի կոլխոզնիկների թիվը, թե չե կարող է այնպես պատահել, որ մինչև գարնան աշխատանքների սկիզբը ուշանա պլանը։

Պետք է դրությունը հաշվի առնել այնպես, որ ոչ ուշ, քան գարնանային աշխատանքներից մեկ ամիս առաջ կոլխոզի արտադրական պլանը պատրաստ լինի և ընդունված լինի ընդհանուր ժողովի կողմից, որից հետո դադարեցվում է կոլխոզում անդամների ընդունելը մինչև ամառը։ Կոլեկտիվանալ ցանկացողները, յեթե չեն կարողացել ժամանակին մտնել կոլխոզ, պետք է առանձին կոլխոզ կազմակերպեն։

Արտադրական պլանը կազմելիս պետք է հաստատապես հիշել և սխալներ չկատարել,—այսինքն չկազմել շատ մեծ, անիրագործելի պլաններ, հույս դնելով պետությունից ստացվելիք վարկերի, մեքենաների, անասունների վրա և այլն։

Ոչ մի իլյուզիա և ոչ մի ինքնախաբեություն չպիտի լինի։ Պետք է գլխավորապես հույս դնել սեփական, կոլխոզային միջոցների վրա, կոլեկտիվացող ազգաբնակության միջոցների վրա, որոնց զորահավաքմանը պետք է բացառիկ ուշադրություն դարձնել։

Կողմնակի վարկերի և ոգնության վրա պետք է հույս դրնել միայն որպես լրացուցիչ միջոցների, այն ել այն չափերով, որոնք ռայոնական կոլխոզմիության կողմից նշանակված են տվյալ կոլխոզի համար։

Ավելին չպիտի սպասել, որովհետև կարելի յե այդպիսի միջոցներ չստանալու դեպքում դառը կերպով հիասթափվել։

Իսկ յեթե կոլխոզին իսկապես ավելի շատ վարկ է հարկավոր, քան թե նրա համար ծրագրել է ռայոնական կոլխոզմիությունը, ապա ուրեմն պետք է ապացուցել այդ հանգամանքը և հաջողեցնել, որպեսզի փոխվեն վարկավորման գումարները։

Տվյալ կոլխոզի համար առանց լրացուցիչ վարկավորում ստանալու, չպետք է հիմնական ներդրումներ ծրագրել ի հաշիվ վարկերի։

Կոլխոզում գարնանացանի կամպանիային պատրաստվելիս արտադրական պլանը կազմելու ժամանակ պետք է կանգ առնել հետևյալ մոմենտների վրա.—

ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Գարնանացանի կամպանիայի հաջող անցկացումը կախված է աշխատանքի ճիշտ կազմակերպումից, իսկ վերջինս սերտ կապակցության մեջ է գտնվում կոլխոզի տերրիտորիան ուղիղ կազմակերպելու հետ։

Ի նկատի ունենալով այս հանգամանքը, անհրաժեշտ է, որպեսզի վաղորոք մշակվեն տերրիտորիայի կազմակերպման հարցերը։

Վերջինս սովորաբար սկսվում է գյուղատնտեսական ձեռնարկությունների (ագարակներ, խոտհարք, հերկեր և այլն) պլանավորումից, որով սահմանվում է նրանց չափը։ Ագարակային հողերի տարածությունները կարող են լայնացվել անհրաժեշտ համայնացված շենքերի համար (գարաժներ, հացահատիկային պահեստներ, անասնաբակեր, խոզանոցներ և այլն)։

Վարելահողերի տարածությունները սովորաբար սահմանվում են ըստ այն հանգամանքի, թե որչափ ուժեղ են արտադրության միջոցները (մեքենայական քարշող ուժ կամ

լծկան ձիյեր, գյուղատնտեսական գործիքներ և այլն), վորոնք գոյություն ունեն կոլխոզում, ինչպես նաև հաշվի առնելով այն քանակությունը, վորը կարելի կլինի ստանալ նոր կոլխոզնիկներ ներգրավելուց հետո, այլ և կողմնակի կերպով գնելով։

Վարելահողը կարող է լայնացվել ի հաշիվ չոգտագործվող հողերի, թփուտների կամ համապատասխան խոտհարքների պակասեցման։

Պետք է ի նկատի ունենալ, վոր լայնացնելով վարելահողը, մանավանդ յերբ այդ կատարվում է ի հաշիվ խոտհարքների կրճատման, համապատասխան կերպով ապահովվեն համայնացված կենդանիների կերի պահանջները՝ ի հաշիվ համապատասխան ցանովի խոտերի (արհեստական արոտատեղիներ, արմատապտուղներ, սիլոսի համար ցանքեր և այլն)։

Ինչ վերաբերում է խոշոր, մասնագիտացված կոլխոզներին (արդյունաբ.—խոզաբ. կոլխոզներ), կամ այն կոլխոզներին, վորոնք ապրանքային հոտեր (նախիրներ) ունեն (կաթնատապրանքային ֆերմա), պետք է տերբիտորիայի կազմակերպման կարգով առանձնացնել հատուկ հողամասեր, ֆերմաներին կամ ագարակներին կից արոտատեղիների կամ կերի ցանքաշրջանների համար։

Տերբիտորիայի կազմակերպումն առանձնապես հեշտանում է, յեթե հողը բաժանված է վորոշ, 100 կամ 400 հեկտար տարածությամբ վանդակների։ Այդպիսի 1 վանդակի միջով թողնվում է ճանապարհ—10 մետր լայնությամբ, յեթե հողը տրակտորներով է մշակվում և 4 մետր լայնությամբ—լծկան ձիյերով մշակելու դեպքում։

Վանդակները պետք է համարակալված լինեն։ Հավասար մակերևույթով հողամաս ունենալու դեպքում վանդակները պետք է քառակուսի լինեն։

Գյուղատնտեսական աշխատանքները կատարելու հարմարության համար, ինչպես և հաշվառքը հեշտացնելու նպատակով մի քանի 100 կամ 400 հեկտարանոց վանդակներից կազմվում են բրիգադային հողամասեր։

Կոլխոզի արտադրական պլանը կազմելու ժամանակ պետք է նաև կազմել հատուկ պլաններ—պլան-նարյադներ այդ բրիգադային հողամասերի համար, այսինքն յուրաքանչյուր դաշ-

տային բրիգադայի համար։ Պլան-նարյադներում հաշվի յե առնվում, թե վորքան ինվենտար, քաշող ույժ, գյուղատնտեսական մեքենաներ և մարդիկ պետք է լինեն բրիգադայում, ի՞նչ ժամանակամիջոցում պետք է նրանք կատարեն բոլոր աշխատանքներն իրենց հողամասի վրա։ Այդ մասին կխոսենք ստորև։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Թե կոլխոզային և թե կոլեկտիվացող ազգաբնակչությանը պատկանող ինվենտարի վերանորոգման կարիքի ժամանակին հայտաբերումն և այդ ինվենտարը աշխատանքի համար պիտանի դարձնելը բացառիկ նշանակություն ունի։

Գարնանացանի հաջող անցկացման համար այդ գործը պետք է ավարտվի վոչ ուշ, քան ցանքից 10—15 որ առաջ։

Ուստի անհրաժեշտ է, ինչպես արդեն վերևում մատնանշել ենք, վորպեսզի հատուկ կոմիսիան, վորը նշանակված է կոլխոզի արտադրական խորհրդակցության և վարչության կողմից—հենց այժմ սկսե կատարել այդ աշխատանքը։

Ամենից առաջ այդ կոմիսիան պետք է հայտնաբերե գոյություն ունեցող ամբողջ ինվենտարը—թե աշխատանքի համար պետքական և թե նույնիսկ անպետք։

Ամբողջ ինվենտարը, վորը վերանորոգումից հետո կարող է ոգտագործվել, պետք է անհապաղ կերպով վերանորոգվի, իսկ բացարձակորեն անպետք ինվենտարը պետք է հանձնվի իբրև յերկաթե ջարդված՝ Ռուդմետալտորգին։

Յեթե կարիք-վինի, պետք է կազմակերպել վերանորոգման արհեստանոցների, դարբնոցների և այլն, 2 կամ նույնիսկ 3 հերթով աշխատանքը և լիակատար չափով ապահովել լավ վորակի և իր ժամանակին կատարվող վերանորոգումը։

Ճիշտ նույնպես ժամանակին պետք է վերանորոգել ամբողջ ձիասարքը, լծասարքը, սայլերը, արաբաները, ջրկիրները, շրջիկ վագոնիկները և այլ ինվենտարը, վորը պետք է ոգտագործվի ցանքի կամպանիայի ընթացքում։

Ժամանակին պետք է հոգս քաշել պահեստի մասեր, խո-

փեր, խոմուտներ, ձիասարք ունենալու մասին, մանավանդ տրակտորների համար վառելանյութ և մեքենաների համար յուղանյութ ունենալու մասին։

Վերանորոգումից հետո ինվենտարը ստանալիս հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել վերանորոգման վորակի մանրակրկիտ ստուգման վրա։

Ամբողջ ինվենտարը պետք է մաքրվի կեղտից, պետք է ստուգվի, յուղվի, պատատակվի, բոլոր մասերը իրենց տեղում լինեն և այլն։

Ցանիչները պետք է դուրս բերվեն և պատրաստվեն ցանելու համար։ Այստեղ պետք է ուշադրությունից չվրիպե այն, վոր յեթե յենթադրվում է կատարել սերմացույի թաց զտում, հացահատիկի ախտահանում, ապա ցանիչների ստուգումը պիտի կատարվի այնպիսի խոնավությամբ հացահատիկով, վորպիսի խոնավությամբ վորպիսի այն ցանվի։ Հակառակ դեպքում ցանիչներին չոր հացահատիկով բանեցնելը սխալ կլինի։

ԼԾԿԱՆՆԵՐԻ ՑԵՎ ՄԹԵՐԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արտադրական պլանը կազմելիս, ավելի ճիշտ՝ գարնանացանի կամպանիային պատրաստվելիս պետք է առանձնապես մտածել լծկան և մթերատու անասունների մասին։

Ցանքից 1 և կես—2 ամիս առաջ անպայման անհրաժեշտ է հայտնաբերել յուրաքանչյուր առանձին կենդանու առողջության փաստական դրությունը, վորպեսզի բոլոր լղարներին ու թույլերին անհապաղ կերպով սկսել տալ ուժեղ կեր և առանձնապես մանրակրկիտ խնամք տանել նրանց վերաբերմամբ։

Առհասարակ, գարնան մոտերը բոլոր անասուններին պետք է կերակրել մի փոքր ավելի առատ, քան թե ձմեռը, իսկ մթերատու անասուններին (կով, խոզ և այն), վոր պետք է ծնեն, ուստի և ուժեղ չափով եներգիա կորցնելու այդ ժամանակամիջոցում նրանք պետք է ուժեղ կերակրվեն։

Սակայն լղար և թույլ կենդանիների վերաբերմամբ պետք է լրացուցիչ և ուժեղ կեր սահմանել մյուս կենդանիների հանդեպ։ Ավելի լավ է այդ լղար և թույլ կենդանիներին նույնիսկ ջոկել և առանձին պահել։

Կոլխոզը պետք է նաև առանձնապես հոգ տանի իր բոլոր կերի պաշարը հայտնաբերելու և կերի ֆոնդեր ստեղծելու մասին—այն չափերով, վորպեսզի մինչև նոր բերքը լիովին ապահովված լինի անասունների կերը։

Անպայման անհրաժեշտ է, վորպեսզի կոլխոզն իր մեջ նոր անդամներ ընդունելով հանդերձ, համայնացնե նրանց ունեցած կերը։

Յուրաքանչյուր գյուղացի, վորը մտնում է կոլխոզ, իր անասունների հետ պետք է համայնացնի նաև կերի անհրաժեշտ քանակությունն՝ համայնացվող անասունների համար։

Իհարկե, այստեղ կարող են լինել բացառություններ՝ չունևոր, սակավազոր գյուղացիների վերաբերմամբ։

Լծկան և մթերատու անասունների ուժեղացրած կերակրման և բավականաչափ կերի ֆոնդեր ստեղծելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է վերանայել, թե վորքան հաջող և ուղիղ են գույգ դարձվել ձիերն ու յեզները գույգ-գույգ աշխատելու համար։ Արդյոք չի՞ պատահել այնպես, վոր մեկ ձին կամ յեզը ուժեղ է մյուսից և ուրեմն միատեսակ ույժով գույգեր չեն կազմվել։

Յերևան բերված պակասությունները պետք է ուղղել։

Պետք է մշակել բանվորական որվա կարգը ցանքային աշխատանքի ժամանակի համար, այսինքն թե յե՞րբ կերակրել անասուններին, յե՞րբ ընդհատումներ անել և այլն։

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ավագ ձիապանների, յեզապահների և այլ աշխատողների վորակի վրա, վորոնք խնամում են անասուններին։ Բոլոր անփույթներին, անուշադիրներին և իրենց կոչմանը չհամապատասխանողներին փոխարինել ավելի լավերով։

Դրա հետ միաժամանակ, պետք է մտածել կովերի, ձիերի, խոզերի զուգավորման պլանի մասին, ապահովելով լավ արտադրողներով և միջոցներ ձեռք առնելով դրանց պակասը լրացնելու համար։

Մսի պրոբլեմն ամենաարագ կերպով լուծելու անհրաժեշտության կապակցությամբ, պետք է առանձնապես մանրամասն և խորը կերպով մշակել կոլխոզներում ապրանքային կենդանաբուծական հոտեր (նախիրներ) կազմելու պլանը, ապա-

հովելով նրանց համար հատուկ շենքեր, կերի անհրաժեշտ քանակ և այլն։

Այս բոլոր հարցերը պետք է ճշգրիտ և պարզ կերպով դրված լինեն կոլխոզի արտադրական պլանում։

ՍԵՐՄՆԱՓՈՆԴԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՅԵՎ ՍԵՐՄԱԶՏՈՒՄ

Կարիք չկա ասելու, որ ցանքային կամպանիայի հիմքը կազմում և որակով և քանակով բավականաչափ սերմացուն, որը բավարարի ցանքային պլանին։

Կոլխոզները պետք է մի առանձին հաստատակամությամբ և հմուտ մոտեցումով ապահովեն կոլխոզ մտնող բնակչության ամբողջ սերմացուի պաշարների մուծումը։ Պետությունից սերմացուի ոգնություն չպետք է սպասել։ Հնարավոր է միայն պարենային հացահատիկների փոխարինումը սերմացուով, բայց միայն եկվիվալենտին համապատասխան, սերմնաբուծական գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով։

Սերմացուները պետք է վաղորոք տեսակավորվեն, անցկացվեն զտիչ մեքենաներով և այլն։

Զտման միջոցների պահանջը որոշելիս անհրաժեշտ է յելակետ ունենալ այն, որպեսզի գարնանացան ցորենի, վարսակի և գարու սերմացուները հարյուր տոկոսով զտման յենթարկվեն, ըստ որում զտման ձևի վերաբերմամբ պետք է ղեկավարվել այն ցուցմունքներով, որոնք տալիս են գյուղատնտեսները։

Ֆորմալինը թաց զտման դեպքում ծախսել այսպես.—2000 կիլոգրամ հացահատիկին 1 լիտր քառասուն տոկոսանի ֆորմալին։ Ֆորմալինի լուծորդը պատրաստվում է այսպես.—1 մաս ֆորմալինը լուծվում է 300 մաս ջրի հետ։

Թույների ծախսը, չոր թույներ գործադրելիս.—16 կիլոգրամ հացահատիկի համար պահանջվում է.—

48 գրամ ածխաթթվուտային պղինձ,
8 գրամ փարիզյան կանաչ,
48 գրամ անվնաս դարձրած պղնձի արջասպ։

Մեքենաների պահանջը չոր զտման-ախտահանման դեպքում որոշվում է արդեն ունեցած մեքենաների հաշվառմամբ, յելակետ ունենալով նրանց միորյա արտադրողականությունը։

Պետք է ստուգել թույների մնացորդը թե քանակային և թե վորակային կողմից (փարիզյան կանաչ, միշյակոտ-թթու թե վորակային, պղնձի արջասպ և այլն), մասնավորապես զտման-ախտահանման միջոցները, թե թաց և թե չոր ախտահանման համար։

Պարզել, թե ինչ քանակով ապարատներ կան ֆնասատուների դեմ կռվելու համար և պատրաստել ախտահանիչ մեքենաները, նշելով առաջիկա կամպանիայում նրանց ռացիոնալ ոգտագործման պլանը։

Այդ մեքենաների պակասության դեպքում միջոցներ ձեռք առնել նրանց ձեռք բերելու և տնայնագործական ձևով պատրաստված մեքենաները չոր ախտահանման համար ոգտագործելու։

Իր ժամանակին չոր թույներ չստանալու դեպքում, շտապ միջոցներ ձեռք առնել նրանց ֆորմալինով փոխարինելու համար։

Սերմացուի զտման ու ախտահանման աշխատանքի մեջ ներգրավել բույսերի պաշտպանության համար յեղած ամբողջ ներգրավել բույսերի պաշտպանության համար յեղած ամբողջ պերսոնալը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները (ՀԱՄԼԿՅԵՄ, ՊԱԶ-ը-ավիաքիմ, գյուղյերիտ և այլն), նրանց առաջ քաշելով ակտիվ, աշխատանքներն անմիջականորեն ղեկավարելու համար—գյուղատնտեսի ցուցմունքներով։

ՊԼԱՆ-ՆԱՐՅԱԴՆԵՐ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿԱԶՄՈՒՄԸ

Կոլխոզի արտադրական պլանը կազմելուց հետո, պետք է այդ պլանը մասերի բաժանել, այսինքն առանձին բանվորական բրիգադների համար կազմել ուրույն պլաններ, որպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկ գիտենա վոչ միայն այն, թե վորքան պիտի ցանե ամբողջ կոլխոզը, այլև ճշգրիտ ու պարզ գիտենա, թե վո՞րտեղ, վո՞ր հողամասում, վո՞ր բրիգադայում նա պիտի աշխատի, քանի՞ հեկտար և ի՞նչ կուլտուրաներ պիտի

ցանե նրա բրիգադան, քանի՞ բանվորական որ է նա աշխատելու և այլն։

Ինչպես վերևում արդեն ասված է, նպատակ ունենալով թե աշխատանքի և թե արտադրության միջոցների ոգտագործման հարմարություն ստեղծել (գործիքների տեղափոխություններ կրճատում, սեփական աշխատանքի համար պատասխանատվության զգացմունքի բարձրացում, աշխատանքի մեջ ավելի շատ կազմակերպվածություն և կարգ մտցնելը և այլն), կոլխոզի ամբողջ հողային տարածությունը բաժանվում է մի շարք հողամասերի, վորոնք մշակվում են առանձին բրիգադների ուժերով։

Բրիգադային հողամասերի տարածությունը, նայած տեղական պայմաններին (գետեր, ձորեր, ճանապարհներ և այլն) և իրեն, բրիգադիրի ընդունակություններին և այլն, կարող է լինել զանազան, որինակ, 600-ից մինչև հազար հեկտար ցանք ամբողջ գարնան ժամանակվա ընթացքում։

Բրիգադային հողամասերը նշանակելուց հետո այդ բրիգադային հողամասերի համար կազմվում են առանձին պլան-նարյադներ։

Պլան-նարյադի մեջ հիշվում է հետևյալը.—

1) Ի՞նչ աշխատանքներ պիտի կատարվեն այդ հողամասի վրա։

2) Աշխատանքները կատարելու ժամկետերը։

3) Այդ աշխատանքները կատարելու համար պահանջվող մեռած և կենդանի ինվենտարի քանակությունը։

4) Հարկավոր մարդկանց քանակը։

5) Բրիգադայի համար պահանջվող ցանքային մատերիալները և կերը։

6) Ոժանդակ դույքի (սայլեր, արաբաներ և այլն) կարիքը և այլն։

Ունենալով յուրաքանչյուր հողամասի համար այդպիսի պլան-նարյադ, սկսում են կազմակերպել բրիգադներ ըստ բրիգադային հողամասերի թվի։

Ցանկալի է բրիգադներն ստեղծել այն կոլխոզնիկներից, վորոնք իրարու մոտիկ են ապրում, քանի վոր այս հանգամանքը կհեշտացնի նրանց կապը թե աշխատանքի դուրս գալու և թե այլ դեպքերում։

Բրիգադիրի պարտականությունների համար աշխատողներ ընտրելուն պետք է վերաբերվել ամենայն լրջությամբ, քանի վոր բրիգադը հանդիսանում է արտադրական հիմնական բջիջը կոլխոզում և բրիգադներում աշխատանքների կարգավորվածությունից հսկայական չափով կախված է իրեն, կոլխոզի բարեկեցությունը։

Բրիգադիրներն անպայման պետք է ընտրվեն արտադրական խորհրդակցություններում և հաստատվեն կոլխոզի վարչության կողմից։

Այդ աշխատանքի համար պետք է ընտրել ամենահավատարիմ կոլխոզնիկներին, ամենահեղինակավորներին, ջանասերներին և տնտեսապես փորձվածներին։

Վոչ մի դեպքում չպետք է արգելք լինել միջակներին վորպես բրիգադիրներ աշխատելուն—յեթե նրանք իսկապես համապատասխանում են այդ կոչմանը։

Իրեն տրամադրած իրավունքի սահմաններում բրիգադիրը գործադրում է արտադրության բոլոր միջոցները (մեքենաներ, լծկան ձիյեր, ինչպես և նրա բրիգադայում յեղած մարդկանց)։

Վարչության առաջ նա պատասխանատու յե ամբողջ բրիգադայի աշխատանքի համար, իսկ բրիգադայի ամեն մի մասնակից—իր աշխատանքի համար, անմիջապես բրիգադիրի առաջ։

Բրիգադայի համար պլան-նարյադ կազմելուց և բրիգադան կազմակերպելուց հետո, վերջինս իր արտադրական խորհրդակցության մեջ քննում է պլան-նարյադը։

Այդ քննությունը ունի հսկայական նշանակություն, քանի վոր նրա միջոցով յուրաքանչյուր մասնակցող պիտի գիտենա, թե ինքն ի՞նչ պիտի անի, նույնպես պիտի գիտենա ամբողջ կոլխոզի պլանը, ուրեմն կլինի վոչ թե կույր գործիք, այլ կոլեկտիվ տնտեսության գիտակից մասնակցող։

ՍՈՑՄՐՅՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՑՆՈՒԹՅՈՒՆ

Յեթե կոլխոզնիկների արտադրական խորհրդակցությունը հանդիսանում է կոլխոզի տնտեսական և կուլտուրական կյան-

քին նրանց գործնական մասսայական մտնակցության ձևը, ապա սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը հանդիսանում են կոլխոզնիկների դեպի աշխատանքը նոր, կոմունիստական վերաբերմունքի ձև, մի այնպիսի ձև, որն արտահայտում է ենտուզիազմ և գիտակցական վոգևորություն կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսության հանդեպ։

Առանց հարվածայինների, առանց այնպիսի մարդկանց, որոնք սրտանց են կպել գործին և ամբողջ յեռանդով ու ենտուզիազմով անձնատուր են լինում կոլեկտիվ գործին, չի կարելի հաջողությամբ լուծել համատարած կոլեկտիվացման ավարտման խնդիրը։

Արդեն ընթացիկ տարում կոլխոզների մի նշանակալից քանակ ցույց տվեց աշխատանքի բարձր վորակի որինակներ,—թե տնտեսության կազմակերպման և թե մարդկային ուժերի ու ինվենտարի ուղիղ ոգտագործման ասպարիզում։ Կոլխոզների այդ քանակը տվեց դեպի սոցիալիստական տնտեսավարությունը կոլխոզնիկների իսկական գիտակցական վերաբերմունքի նմուշներ։ Սակայն, կոլխոզների մեծ մասում աշխատանքի վորակը դեռ ևս բացահայտորեն անբավարար է։

Կոլխոզներում աշխատանքի վորակի բարձրացումը, տնտեսության ներսում կատարյալ կարգ ու կանոն սահմանելը, որը կապահովե կոլխոզի վերածումը խոշոր սոցիալիստական տնտեսության՝ արտադրողականության բարձր մակարդակով — սա կոլխոզային շինարարության կարևորագույն խնդիրներից մեկն է։ Կուսակցական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն ուշադրությունը կոլխոզներում ներքին տնտեսական կարգ ու կանոնի կազմակերպման վրա։ Աշխատանքի ճիշտ կազմակերպումը (գործարքային աշխատանքի գործադրությունը, աշխատանքների տարիֆիկացիան), աջակցությունը կոլխոզնիկների կողմից կոլխոզում զարգացած արտադրության ճյուղերի համեմատ մասնագիտության ձեռք բերելուն, մեքենայացման և այլն—դրան համապատասխան՝ արտադրության ճյուղերում բրիգադների կազմակերպումը,—հանդիսանում է կոլխոզի աճումն ուժեղացնելու և ամրապնդելու հիմնական նախադրյալներից մեկը։

Կոլխոզային սիստեմի և կուսակազմակերպությունների կողմից ներկոլխոզային կյանքի ղեկավարումը պետք է լիակատար չափով յելակետ ունենա առանձին կոլխոզների արտադրության հատայնացված միջոցների աճման կենդանի և որգանական պրոցեսը։ Կոլխոզներում լայնորեն պիտի ծավալել սոցիալիստական մրցությունն և հարվածայնությունը, ապահովել տնտեսավարման արդյունքների բաշխման գործը՝ ըստ յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի քանակի և վորակի։

Կուսկազմակերպությունները պետք է ուժեղացնեն կոլխոզներում չքավոր-բատրակային խմբակների աշխատանքը և հենվելով նրանց ու կոլխոզնիկների լավագույն մասի վրա, ուժեղացնեն պայքարը հանուն բարձր աշխատանքային դիսցիպլինայի, ընդդեմ սպառողական, կորզողական տրամադրությունների։

(ԿԿ-ի վորոշումից)

Կարողանալ հայտնաբերել կոլխոզնիկներից ու անհատականներից ազնվորեն, հավատարմությամբ աշխատողներին, որոնք ամբողջ ձգտումով նվիրված են համատարած կոլեկտիվացման գործին, կարողանալ նրանց մեջ կազմակերպել սոցիալիստական մրցությունը՝ առաջադրությունը ամենալավ կերպով կատարելու համար, կարողանալ այդ ենտուզիաստների շուրջը կազմակերպել մնացած բատրակ-չքավորական և միջակ մասսաներին և ճիշտ ղեկավարել նրանց,—այդ նշանակում է ամբողջովին և լիակատար չափով լուծել համատարած կոլեկտիվացման ավարտման խնդիրը։ Այս բանը պետք է ապացուցեն գյուղական կուսակցական կազմակերպությունները մոտակա 2-3 ամսում։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԱՆԻ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

Գարնանացանի կամպանիան, բոլշևիկյան յերկրորդ գարունը պետք է անցկացվի հիմնականում վորպես համատարած կոլխոզային ցանքի կամպանիա։

Գարնանացանին նախապատրաստվելը և նրա անցկացումը պիտի ընթանա դասակարգային սրված պայքարի պայմաններում։ Կուլակը կատաղաբար պաշտպանելու յե իր վերջին դիրքերը և այս բանը վորոշում է նրա դիմադրության առանձնահատուկ կատաղությունը, պահանջում է անհաշտ լինել դասակարգային թշնամու դեմ պայքարելիս, պահանջում է, վոր կոլխոզները լիակատար շրջադարձ կատարեն դեպի կոլխոզշարժումը, դեպի կուլակության վերացումն իբր դասակարգի։ Հենվելով կոլխոզնիկների և չքավորության վրա, կազմակերպելով գյուղացիության ամենալայն աշխատավորական մասսաներին, խորհրդները պետք է նշանակալից չափով ուժեղացնեն և գլխավորեն դեպի կոլխոզներն յեղած հոսանքը, ապահովելով համատարած կոլեկտիվացման ավարտումը յերկրամասի հիմնական ռայոններում, զգալիաչափ ընդլայնելով կոլխոզային սեկտորը ազգային մարզերում, նախապատրաստելով բոլոր անհրաժեշտ պայմանները այդ մարզերի համատարած կոլեկտիվացման անցնելու, հիմք ունենալով դեպի կոլխոզները նոր հոսանքի կամավորությունը և չքավոր-միջակ տնտեսությունները պարզ ձևի արտադրական կոոպերատիվային միություններում ներգրավելը։

Հյուսիսային Կովկասի Յերկրային Գործադիր Կոմիտեն գտնում է, վոր յերկրամասի խորհրդների, հողային կոլխոզ-կոոպերատիվ կազմակերպությունների այս հերթական ու մոտակա անելիքների կապակցությամբ, առաջիկա գարնանային գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստության ասպարեզում պետք է անել հետևյալը։—

1) Պատրաստել ցանքային պլանները և սրանք հասցնել մինչև գյուղ, ստանիցա, աուլ, կոլխոզ, վերջինիս բրիգադները, ինչպես և անհատական տնտեսությունը։

2) Վճռականապես ծավալել հասարակական մասսայական աշխատանքը կոլխոզնիկների և գյուղացիության չքավոր-միջակ մասսաների մեջ—այն հարցերի շուրջը, վորոնք վերաբերում են գարնանացանի կամպանիայի միջոցառումների մշակման ու քննության, գյուղերի, ստանիցաների և աուլների ցանքային պլանին, համատարած կոլեկտիվացման ավարտման և դրա հիմունքով կուլակի վորպես դասակարգի վերացման։

3) Ղեկավար ու հրամանատարական կադրերն ամրապնդելու նպատակով կոլխոզներում առանձ լայն կամպանիա, նրանց կառավարման որգանների և հրամանատարական կադրերի վերընտրության համար (բրիգադիրներ, դաշտագործներ և այլն)։

4) Նախապատրաստվել սովխոզ-կոլխոզային կազմակերպված ցանքի անցկացման համար։

5) Կոլխոզում պատրաստել նոր և վերապատրաստել յեղած կադրերը և ծավալել միջոցառումներ՝ կոլխոզնիկների և անհատական չքավոր-միջակ մասսաների ագրոկոլխոզային մասսայական ուսուցման համար։

6) Ժամանակին ներգրավել յերկրամասի և մանավանդ ազգային մարզերի և ազգային ռայոնների չքավոր-միջակ մասսաներին՝ գարնանացանի կազմակերպված նախապատրաստության անցկացման գործում։

7) Յերկրամասի բոլոր կոլխոզները և սովխոզները ժամանակին պիտի կազմեն արտադրական-ֆինանսական պլանները և պետք է հաստատուն պլանային սկզբունքներ սահմանվեն կոլխոզային արտադրության մեջ։

8) Կոլխոզներում ժամանակին և ճիշտ կազմակերպել աշխատանքը, նպատակ ունենալով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և ամենամեծ չափով ոգտագործել արտադրության միջոցները։

9) Կոլխոզներում և անհատական տնտեսություններում լիակատար չափով ավարտել սերմֆոնդերի հավաքումը, նրանց զտումն և կերի ֆոնդերի ստեղծումը այն չափերով, վորոնք ապահովում են գարնանացանի կամպանիայի անցկացումը։

10) Ժամանակին պատրաստել գյուղատնտեսական ինվենտարը, մեքենաները, լծասարքը, ռեժոնտի և հները նորերով փոխարինելու միջոցով:

Այս խնդիրների կապակցությամբ, ինչպես նաև «1931 թվականի գարնանացանի պլանի մասին» ՌՍՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշման համապատասխան, Հյուսիսային Կովկասի Ցերկրային Գործադիր Կոմիտեն վորոշում է.—

1) Հյուսիսային Կովկասում 1931 թվականի համար գարնանացանի տարածության չափը հաստատել 8,650,000 հեկտար, կամ անցյալ տարվա գարնանացանի տարածության 108,1 տոկոսի չափ, այդ թվում, ազգային մարզերում—742,000 հեկտար, կամ 107,4 տոկոս, այնպես, վոր սովխոզների ու կոլխոզների ցանքերի տարածությունը կազմի մոտավորապես 7,555,000 հեկտար (յերկրամասի գարնանացանի 87,3 տոկ.):

2) Հիմք ունենալով 1931 թվականին ցանքերի տարածության սոցիալիստական սեկտորի նշանակալից աճումը, գյուղատնտեսության մեջ ագրո-տեխնիկական միջոցառումների և մեքենայացման ուժեղացումը, հաջողեցնել, վոր 1931 թվականին բերքատվությունը յերկամասում բարձրանա միջին թվով, հետևյալ չափերով.—

ա) Ցորեն—15,5 տոկոս,—սովխոզներում—20 տոկ., մեքենատրակտորային կայաններում—15 տոկ. և կոլխոզներում—10 տոկոս:

բ) Գարի և վարսակ—16 տոկոս, սովխոզներում—20 տոկ., մեքենա-տրակտորային կայաններում—17 տոկ. և կոլխոզներում—12 տոկոս:

գ) Արևածաղիկ և յեգիպտացորեն—17 տոկոս, սովխոզներում—22 տոկոս, ՄՏԿ-ներում—16 տոկոս և կոլխոզներում—12 տ.:

դ) Ծխախոտ—10 տոկ., սովխոզներում—12 տոկոս, կոլխոզներում—8 տոկոս և անհատական սեկտորում—5 տոկոս:

յե) Մնացած տեխնիկական կուլտուրաների վերաբերմամբ, բոլոր սեկտորներում—15 տոկոս:

զ) Կերի կանաչ և արմատապտուղներ—16 տոկոս բոլոր սեկտորներում (յելնելով վերջին 7 տարվա միջին բերքատվությունից):

Այդ նպատակով պարտավորեցնել Ցերկրհողբաժնին՝ տասնորյա ժամանակամիջոցում մշակել այն բոլոր ագրո-տեխնիկական միջոցառումների ցանկը, վորոնք պարտադիր են 1931 թվականին, մասնավորապես կանխորոշել հետևյալ ագրո տեխնիկական միջոցառումների կատարումը.—

ա) Սելմազտումը—100 տոկոսով և բոլոր կուլտուրաների վերաբերմամբ, բոլոր սեկտորներում սերմնային մատերիալի համապատասխան վորակային ընտրությունը:

բ) «Գոլոմնյա» կոչված հիվանդությամբ (բույսերի) վարակված ռայոններում ցորենի, վարսակի, գարու և կորեկի 100 տոկոսով ախտահանումը—զտումը:

գ) Ամբողջ յերկրամասում 100 տոկոսով շարքացանը:

դ) Տեսակավոր սերմացուների ցանքը հասցնել հետևյալ չափերին.—ցորեն—50 տոկոս, անցյալ տարվա 30,9 տոկոսի փոխարեն, վարսակ—54 տոկոս, անցյալ տարվա 34 տոկոսի փոխարեն, արևածաղիկ—65 տոկ., անց. տ. 37 տոկոսի փոխարեն, յեգիպտացորեն—65 տոկ. անց. տ. 23 տոկոսի փոխարեն:

յե) Իր ժամանակին ցանքը կատարել, մշակել, հավաքել և վճռականապես պայքարել գյուղատնտեսության արտադրության մեջ կորստների և ցանքի սկիզբը ուշանալու դեմ:

4) Վորպես առաջին հերթի տնտեսական խնդիր, յերկրամասի սովխոզներում և մեքենա-տրակտորային կայաններում կատարել գյուղատնտեսության արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:

1931 թվականի համար յերկրամասի սովխոզներում վորոշել ինքնարժեքի իջեցումը 20 տոկոսով, ՄՏԿ-ներում—15 տոկոսով և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել—սովխոզներում—25 տոկոսով և ՄՏԿ-ներում—20 տոկոսով:

5) Պարտավորեցնել մարզային և ռայոնական գործադիր կոմիտեներին, հիմք ունենալով մարզին և ռայոնին 1931 թվականի համար տրված ցանքային տարածությունները, անհապաղորեն կազմել առաջադրությունները և տալ յուրաքանչյուր ստանիցային, գյուղական և աուլային խորհրդին:

Նախազգուշացնել մարզգործկոմներին և ռայգործկոմներին, վոր մարզի և ռայոնի համար սահմանված ցանքային տարածությունները յենթակա չեն փոփոխման, թե նրանց ընդհանուր ծավալի և թե առանձին կուլտուրաների վերաբերմամբ:

6) Առաջարկել մարզգործկոմներին և ռայգործկոմներին՝ ապահովել պլանների ժամանակին կազմելն ու հասցնելը դեպի գյուղերը, ստանիցաները և աուլները—դեպի յուրաքանչյուր կոլխոզը և ցանվորների խմբակը, ինչպես նաև այդ պլանների ամենալայն քննությունն ու մշակումը արտադրական խորհրդակցություններում, կոլխոզնիկների ժողովներում, կանանց արտադրական խորհրդակցություններում, ցանվորների խմբակներում և ստանիցաների, գյուղերի ու աուլների խորհրդների պլենումներում: Ամբողջ աշխատանքը կատարել սոցմրցման, հարվածայնության և հանդիպական պլանների կիրառման հիմունքներով:

7) Պարտավորեցնել մարզգործկոմներին ու ռայգործկոմներին՝ սահ-

մանված ժամանակամիջոցում ավարտել կոլխոզների և ցանվորների խմբակների սերմացուների ֆոնդերի (ընդհանուր տարածության 25 տոկոսը) լիակատար հավաքումը։ Այդ նպատակով ծավալել հասարակական-մասսայական աշխատանքը՝ սերմացուների պաշարի, նույն թվում նաև բանջարանոցային պարտեզային կուլտուրաների, կերի և տեխնիկական կուլտուրաների սերմացուների հավաքման համար։

Նախազգուշացնել մարզգործկոմներին ու ռայգործկոմներին, վոր սերմափոխատվությունների վերաբերյալ և վոչ մի դիմում չի բավարարվելու։

8) Պարտավորեցնել մարզգործկոմներին, ռայգործկոմներին, գյուղերի, ստանիցաների ու աուլի խորհրդներին և կոլխոզների վարչություններին՝ քրեական պատասխանատվության պայմանով թույլ չտալ սերմֆոնդերի, ինչպես և ապահովագրական ֆոնդերի ծախսումը և վոչ մի կերպ և վոչ մի նպատակով, դրանք լիակատար չափով և բացառապես հատկացնելով ցանելուն։

9) Առաջարկել մարզգործկոմներին, ռայգործկոմներին, ստանիցաների, գյուղերի ու աուլների խորհրդներին և կոլխոզների վարչություններին՝ տշնանացանի կամպանիայից մնացած և համայնացված բոլոր սերմնահատիկները հատկացնել գարնանացանի ապահովագրական սերմային ֆոնդերին, առաջարկելով Կրայտորգին ու Սոյուզխլեբին՝ ապահովել աշնանացանի սերմացուների փոխարինումը գարնանացանի սերմացուներով, վորոշված գներով։

10) Հանձնարարել Սոյուզխլեբին, մարզգործկոմներին, ռայգործկոմներին, Ցերկրային Դաշտագործական Միության, Ցերկրային Սերմնաբուծական Միության և Ցերկրային Կոլխոզմիության՝ ապահովել շարքային սերմերը տեսակավոր գարնանացանային կուլտուրաներով փոխարինելու գործարքների կատարումը—այն չափերով, վորոնք նախատեսված են Ցերկրհողբաժնի ու Կրայտորգի պլաններով։ Փոխարինումը վերջացնելու ժամկետը սահմանել 1931 թվականի փետրվարի 1-ը։

20) Պարտավորեցնել տրակտորների բոլոր տերերին անհապաղորեն ներկայացնել տրակտորների վերանորոգման մասին հայտարարություններ, պայմանավորվել, թե ինչ կարգով և վորքան ժամանակամիջոցում պիտի կատարել վերանորոգումը և թե յերբ պետք է տրակտորներն ուղարկվեն արհեստանոցները։ Մեքենա-տրակտորային կայաններով չընդգրկված կոլխոզներում տրակտորների և բարդ մեքենաների վերանորոգման պատասխանատվությունը դնել Տրակտորցենտրի և Ցերկրկոլխոզմիության լիազորի վրա։

21) Կարևոր նշանակություն տալով գարնանային գյուղատնտեսական, ցանքային կամպանիայում լծկան ուժի ուղիղ և լիաչափ ոգտագործմանը, պարտավորեցնել մարզային և ռայոնական գործադիր կոմիտեներին՝ ապահովել ամբողջ լծկան ուժի մարտական մոբիլիզացիան և բացառիկ ոգտագործումը վարելու և ցանելու համար,—գարնանային դաշտային աշխատանքների ժամանակ։

Առաջարկել մարզային և ռայոնական գործկոմներին՝ ուժեղացնել անխնա պայքարը թե կոլխոզներում և թե անհատական տնտեսություններում դեպի լծկան անասունները անտնտեսավար վերաբերվելու և ոգտագործելու դեմ։ Առաջարկել յերկրամասի կոլխոզներին, վորպեսզի կոլխոզ չընդունեն այն տնտեսություններին, վորոնք չարամտորեն վատնում են իրենց լծկան անասունը։

27) Մասսայական աշխատանքը ծավալելու և կոլխոզնիկների ու անհատական չքավոր-միջակ մասսաներին գարնանացանի նախապատրաստության գործնական աշխատանքների մեջ ներգրավելու նպատակով անհրաժեշտ համարել հետևյալը—

ա) Կոլխոզներում և հողային խմբակներում ստեղծել կոմիսիաներ, վորոնք պիտի կատարեն գյուղատնտեսական մեքենաների և ինվենտարի ստուգատես, վերանորոգման կարիքը և չափը վորոշելու և դրան հսկելու համար։

բ) Ստեղծել նման կոմիսիաներ, ստուգելու ամբողջ լծասարքը և տրանսպորտը, նպատակ ունենալով կազմել և պարզաբանել լծասարքի ու տրանսպորտի վերանորոգման պլանները։

Ստեղծել ինքնուրույն կոմիսիաներ, համայնացված լծկան անասունների դրությունն ստուգելու, հիվանդ և թույլ կենդանիներին կերակրելու և խնամելու առանձին կարգ սահմանելու համար։

գ) Նպատակ ունենալով լիաչափ և իր ժամանակին սպառարկել բանջարանոցա-պարտեզային և մի քանի տեխնիկական կուլտուրաներին, կազմակերպել հատուկ կոմիսիաներ՝ կանանց գերակշիռ մասնակցությամբ, ստուգելու բանջարանոցա-պարտեզային ինվենտարի չափը, նրա ոգտագործելու աստիճանը, այդ ինվենտարը ձեռք բերելու և վերանորոգելու համար միջոցների զորահավաքումը, վերանորոգման ժամանակին կատարումը, բանջարանոցային-պարտեզային սերմերով ապահովվելու չափը և մի շարք աշխատանքներ, վորոնք կապված են գարնանացանի կամպանիայի հետ։

գ) Նույնպիսի կոմիսիաներ կազմակերպել՝ զորահավաքելու և ոգտագործելու համար վերանորոգման նյութերի և մեքենաների պահեստի մասերի վերաբերմամբ բոլոր հնարավորությունները։

Միաժամանակ համապատասխան կոմիսիաներն ու արտադրական խորհրդակցությունները պետք է կազմեն վերանորոգման համար միջոցները զորահավաքելու պլանը։

Վերոհիշյալ կոմիսիաներն իրենց աշխատանքները վերջացնելուց հետո ներկայացնում են իրենց պլանները քննության և գյուղատնտեսական ինվենտարի ու տրանսպորտի վերանորոգման, անասունների բաշխման և նրանց կերակրելու առանձին պայմանների վերաբերյալ կոլխոզի ու ստանիցայի ընդհանուր պլան կազմելու համար։

29) Ստորագրման պայմանագրերի կատարման ընթացքը ստուգելու և գարնանացանի կամպանիային նախապատրաստվելու համար սահմանվում է հետևյալ կարգը.—

ա) Կոլխոզները կազմում են ստուգիչ կոմիսիաներ,—իրենց նախաձեռնությամբ կամ ռայկոլխոզմիության հանձնարարությամբ,—և ուղարկում են հարևան կոլխոզն ստուգելու համար։

բ) Բրիգադները, իրենց նախաձեռնությամբ կամ կոլխոզի վարչության հանձնարարությամբ կազմակերպում են ստուգիչ կոմիսիաներ, հարևան բրիգադներում գարնանացանի նախապատրաստման աշխատանքն ստուգելու համար։ Ցանվորների գրուպպան իր նախաձեռնությամբ կամ գյուղխորհրդի հանձնարարությամբ կոմիսիա չի ուղարկում տվյալ գյուղխորհրդի ցանվորների խմբակներից մեկի աշխատանքներն ստուգելու համար և այլն։

գ) Ցուրաքանչյուր ստուգիչ կոմիսիա հետազոտումը վերջացնելուց հետո իր յեզրակացությունների մասին զեկուցում է բրիգադային ժողովում կամ ցանվորների խմբակում, վորոնց ստուգել է բրիգադն, ինչպես նաև զեկուցում է կոլխոզներին ու գյուղխորհրդներին կից համապատասխան արտադրական խորհրդակցություններին։

զ) Ստանիցաների, գյուղերի և աուլների խորհրդները և կոլխոզների վարչությունները պարտավոր են ապահովել բոլոր պակասությունների—ում մեղավորությամբ եվ վոր դրանք լինեն,—ամենալայն քննությունը կոլխոզնիկների և անհատական չքավոր-միջակ տնտեսությունների կողմից և անհապաղ կերպով միջոցներ ձեռք առնել վերացնելու այն ճեղքվածքները, վորոնց հայտնաբերել են ստուգիչ բրիգադները։

դ) Ցերկրային Հողվարչությունը և Ցերկրային Կոլխոզմիությունը Ցերկրային Բանգյուղտեսչության հետ համաձայնվելով, պետք է տեղերին տան հատուկ հրահանգ, ստուգիչ բրիգադներ կազմակերպելու, սրբանց աշխատանքների, հաշվառքի և հաշվետվության կարգի և այլ մասին։ Նման ստուգում կազմակերպել մեքենա տրակտորային կայաններում և սովխոզներում։

30) Ցանքին նախապատրաստվելու բոլոր միջոցառումները, գյուղատնտեսական մեքենաների, լծասարքի և այլն ոպերատիվ, աշխատանքային պլանների կազմումը քննվում են արտադրական խորհրդակցություններում։ Կոմիսիաների և նրանց աշխատանքների կազմակերպումը պիտի ընթանա արտադրական խորհրդակցությունների անմիջական ղեկավարությամբ։

31) Պարտավորեցնել մարզային ու ռայոնական գործկոմներին, ստանիցաների, գյուղերի և աուլների խորհրդներին, գարնանացանի կամպանիայի նախապատրաստական միջոցառումները ծավալելիս, ուշադրություն դարձնել անհատական անկազմակերպ չքավոր միջակ մասսաների ցանքին պատրաստվելու վրա, ծավալելով նրանց մեջ հատուկ աշխատանք՝ գարնանացանին պատրաստվելու հարցերի շուրջը, ցույց տալով նրանց լայն ոգնություն գյուղատնտեսական մեքենաների, ինվենտարի և լծասարքի վերանորոգման գործում, հասարակական սերմնային և կերի ֆոնդեր կազմակերպելիս, սերմացուման գործում և այլն, դրանով ապահովելով նրանց ներգրավումը գոյություն ունեցող կոլխոզները և նրանցից նոր կոլխոզներ կազմակերպելը։ Բացի դրանից, ազգային մարզերում և ռայոններում ուժեղացնել չքավոր-միջակ մասսաների ներգրավումը ամենապարզ ձևի արտադրական կոլեկտիվների մեջ, կազմակերպելով ցանվորների լծկանների միացյալ աշխատանքներ/խմբակներ։

32) Անհրաժեշտ գտնել հունվարի յերկրորդ կեսին կազմակերպել Ցերկրային Արհմիությունների ղեկավարությամբ բանվորների մասսայական արշավ, ստուգելու գարնանացանի կամպանիայի նախապատրաստությունը և կոլեկտիվացման ընթացքը և ոգնելու կոլխոզներին։

33) Գարնանացանի կամպանիայի անցկացման համար Ցերկրգործկոմի լիազորներ նշանակել մարզային ու ռայոնական գործկոմների նախագահներին։

Դրա հետ միևնույն ժամանակ, գարնանացանի նախապատրաստության ընթացքն ստուգելու համար անհապաղորեն ռայոնները գործուղել Ցերկրգործկոմի նախագահության անդամներին։

Գարնանացանին նախապատրաստվելու և կոլեկտիվացման գործում ռայոններին ոգնելու համար անհրաժեշտ համարել հունվարի յերկրորդ կեսում գործուղել Ցերկրգործկոմի նախագահության անդամներին և յերկրային կազմակերպությունների պատասխանատու ղեկավարներին։

34) Պարտավորեցնել յերկրային և ռայոնական մամուլին բացառիկ ուշադրություն հատկացնել գարնանացանի նախապատրաստության ընթացքի լուսաբանման, լայն կամպանիա ծավալելով կոլխոզ-

նիկների և անհատական չքավոր-միջակ մասսաների ուշադրությունը գարնանացանի կամպանիայի և համատարած կոլեկտիվացման հարցերի շուրջը զորահավաքելու համար։

Մամուլն իր աշխատանքը պիտի կատարե այնպես, որ ցանքի նախապատրաստության և անցկացման թերությունների դեմ անխնա պայքարելու հետ մեկտեղ, հայտնաբերի և ժողովրդականացնե ցանքին լավ պատրաստվելու որինակները և դաշտային աշխատանքները կատարելու հարվածային տեմպերը։

35) Տալով հսկայական տնտեսական ու քաղաքական նշանակություն բոլշևիկյան յերկրորդ գարնանային գյուղատնտեսական կամպանիայի անցկացմանը, կոլխոզների ամրապնդմանը, համատարած կոլեկտիվացման ավարտմանն և այդ հիմունքով կուլակի իբր դասակարգի վերացմանը, Յերկրդործկոմը պարտավորեցնում է բոլոր մարդդործկոմներին, ռայդործկոմներին, խորհրդներին, կոլխոզային, կոոպերատիվային և այլ հասարակական կազմակերպություններին՝ անմիջապես վերցնել աշխատանքի մարտական տեմպեր այդ խնդիրները լուծելու համար, լայնորեն ծավալելով սոցիալիստական մրցումը, հարվածայնությունը, բարձրացնելով հանդիպական պլանների ալիքը, զորահավաքելով մասսաներին բոլոր դժվարությունները հաղթահարելու համար, անխնա ու վճռական պայքար մղելու կուլակի դեմ, շինարարության մեջ անտնտեսավարության դեմ, հանուն աշխատանքային դիսցիպլինայի, ընդդեմ գյուղատնտեսական արտադրության կորստների, հանուն յերկրամասի սովխոզների ու կոլխոզների բարձր արտադրողականության և յեկամտաբերության։

Յերկրդործկոմը շեշտում է, որ անհրաժեշտ և ամենավճռական ու անխնա պայքար մղել գարնանացանի նախապատրաստության գործում խորհրդային, տնտեսական ու կոոպերատիվային կազմակերպություններում ոպորտունիզմի ու բյուրոկրատիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՁՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետգրողներից՝ Աշոտ Լուսենցի բանաստեղծությունները։
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետգրողների ասոցիացիայի անդամների գրվածքները
3. Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսութ. և նրա վարչությունը—3-րդ պր.։
4. 16-րդ կուսհամագումարի արդյունքները։
5. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.—արդյունաբերություն։
6. Խոզաբուծության կազմակերպումը կոլխոզում։
7. Կերի հարցը և սիլոսացումը։
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները։
9. Ձեռնարկ ծխախոտագործության համար։
10. Ճագարաբուծություն։
11. Թռչնաբուծություն։
12. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամտների բաժանումը կոլխոզում։ Լավագույն կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում։
13. Տրանսպորտը և կալսիչը. տեխնիկական ձեռնարկ։
14. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները։
15. Կասիլով.—Բոլշևիկյան յերկրորդ գարնան մարտական խնդիրները։

Դիմել՝ Ростов н-Д., Буденовский пр., 60, Крайнациздат.

ՀՀ Ազգային գրադարան
NL0282342

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

8848

16727

661